



«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ
“Enlight” Public Research Center NGO

2021

ISBN 978-9939-1-1326-5



9 789939 113265

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ/ՀԱԿՈՎ ՀԱԿՈՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ANALYSES AND ARTICLES

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ/ՀԱԿՈՎ ՀԱԿՈՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ
ANALYSES AND ARTICLES

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ
HAKOB HAKOBYAN

Երևան / Yerevan
«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ
"Enlight" Public Research Center NGO
2021

ՀՏԴ 330
ԳՄԴ 65
Հ 177

Հակոբյան Հակոբ
Հ 177

Վերլուծություններ և հոդվածներ / Հակոբ Հակոբյան.- Եր.: «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպություն, 2021. 72 էջ:

Հրատարակությունը նվիրված է «Ինլայթ»-ի վերլուծաբան, Խորհրդի անդամ, Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս, մասնագիտությամբ տնտեսագետ Հակոբ Հակոբյանի լույս հիշատակին:

Հակոբը համակարգում էր «Ինլայթ»-ի տնտեսագիտական բաժինը, պրակտիկայի և մենթորության ծրագրերը, հեղինակում, թարգմանում և խմբագրում մասնագիտական տարաբնույթ հոդվածներ:

2013 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի Բիզնեսի կազմակերպման բաժինը՝ ստանալով կոմերցիայի բակալավրի կոչում:

2013-2015 թթ. ծառայել է ՀՀ Չինված ուժերում:

2015 թ.-ին ՀՊՏՀ-ի մագիստրոսական ծրագրի շրջանակում համալսարանական ErasmusPlus փոխանակման ծրագրով սովորել է Եստոնիայի Տարտուի համալսարանի Հանրային կառավարման ֆակուլտետում: 2017 թ.-ին ավարտել է ՀՊՏՀ-ի Պետական և մունիցիպալ կառավարման մագիստրատուրան՝ ստանալով կառավարման մագիստրոսի կոչում:

2017 թ.-ից աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկի Դրամաշրջանառության վարչության Արժույթի թողարկման բաժնում՝ որպես վերլուծաբան:

Տվյալագետ դառնալու հավակնոտ նկրտումներով 2018 թ.-ին ընդունվել է Հայաստանի ամերիկյան համալսարան, որտեղ սովորում էր տնտեսագիտության մագիստրոսական ծրագրով՝ նախքան ռազմի դաշտում հերոսաբար զոհվելը:

Հրատարակության մեջ գետնի վրա հասնելու համար Հակոբի տնտեսագիտական վերլուծությունները, մասնագիտական թարգմանություններն ու հոդվածները՝ հրապարակված «Ինլայթ»-ի կայքէջում [enlightngo.org] 2017-2020 թթ. ժամանակահատվածում:

ՀՏԴ 330
ԳՄԴ 65

ISBN 978-9939-1-1326-5

© «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն, 2021

ՀՏԴ 330
ԳՄԴ 65
Հ 177

Hakob Hakobyan
Հ 177

Analyses and Articles / Hakob Hakobyan. - "Enlight" Public Research Center NGO, Yerevan, 2021. 72 pages.

In memoriam of Hakob Hakobyan, an analyst and Board member at Enlight NGO, a hero of the 44-day Artsakh War, and an economist.

Hakob has written, translated, and edited a number of articles in the field of economics. He was coordinating the division of economists at "Enlight".

Hakob received his bachelor's degree in Commerce at the Faculty of Marketing and Business Organization at the Armenian State University of Economics (ASUE).

He served in the Armed Forces of the RA from 2013 to 2015.

In 2015, within the framework of ASUE master's program, he studied at the Faculty of Public Administration of the University of Tartu, Estonia, through the university exchange program ErasmusPlus. In 2017 he graduated from ASUE receiving his master's degree in Management.

Since 2017 he has worked as an analyst in the Analytics Division of Financial Monitoring Center of the Central Bank of the RA.

With ambitious plans to become a data scientist, he entered the American University of Armenia in 2018, where he studied for master's in Economics, until heroically fell on the battlefield.

The selection includes Hakob's analyses on economic and financial matters, translations of the articles from his professional field and his articles published on enlightngo.org from 2017 to 2020.

ՀՏԴ 330
ԳՄԴ 65

ISBN 978-9939-1-1326-5
©"Enlight" Public Research Center NGO, 2021

Նվիրվում է մեր սիրելի ընկերոջ՝ Հակոբի ընտանիքին՝
նրա 29-ամյա տարեդարձին

2021թ., օգոստոսի 15

Լավ է, եթե

Լավ է, եթե մթության մեջ

Լույսը տեսնում ես.

(Ուրեմն քո աչքերը բաց են);

Լավ է, եթե լույսի մեջ էլ

Մութ ես տեսնում.

(Ուրեմն քո աչքերը փակ չեն):

Մթի մեջ՝ լույս, լույսի մեջ՝ մութ,

Թե տեսնում ես պարզ ու հստակ...

Ուրեմն կյանքում լավն ու վատը

Տարբերում ես դու անկասկած:

2007թ., դեկտեմբերի 8

Հակոբ Հակոբյան

**Dedicated to the Family of Our Dear Friend Hakob
on his 29th Birthday**

August 15, 2021

It's good if -

*It's good if in the dark
You see the light.
(Then your eyes hold open)
It is good if in the light
You see the dark.
(Then your eyes close not).
Light in the dark, dark in the light,
If you see precise and clearly..
All good and bad in life
You can decide completely.*

*December 8, 2007
Hakob Hakobyan
Translated by Heghine Aleksanyan*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ANALYSIS**

Համայնքների տեղական ինքնակառավարումը և դրանց ինքնուրույնությունը	9
Local Self-Government of the Communities and Their Independence	14
Մրցակցային գաղափարների համեմատական վերլուծություն	19
Comparative Analysis of Competitive Ideas	21
Կորպորատիվ կառավարման ճապոնական մոդել	24
Japanese Model of Corporate Governance	29
Կրիպտոարժույթ. Դուք դրան բիթքոյն եք ասում	33
Cryptocurrency: You Call It Bitcoin	38

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
TRANSLATIONS**

ԵԿԲ-ն կանգնած է նոր խթանող փաթեթի ներդրման որոշում կայացնելու առաջ	43
Դաշնային պահուստը կրճատում է տոկոսադրույթները, ինչը Փաուելն անվանում է «միջ-շրջափուլային ճշգրտում»	45
Գերմանիան կարող է անկում ապրել. նախագուշացնում է Բունդեսբանկը	47
Չինաստանը գործարկեց խթանող քաղաքականություն՝ իջեցնելով պահուստավորման նորմը իր ամենացածր մակարդակին 2007 թվականից ի վեր	49
Ուոլ Սթրիթը հորդորում է թրեյդերներին վերադառնալ գրասենյակ	51
ԵՄ 2 գերտնտեսությունները պատմական անկում են ապրում	55

**ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
OTHER PUBLICATIONS**

Direct EU Support to Local Small Businesses Could Reduce Pandemic Related Economic Loss in Armenia	59
ԵՄ ուղղակի աջակցությունը տեղական փոքր բիզնեսին կարող է նվազեցնել համավարակով պայմանավորված տնտեսական կորուստները Հայաստանում	60
Armenia Needs to Introduce a Market-Oriented Policy for IT	63
Հայաստանը ՏՏ ոլորտի համար շուկային միտված քաղաքականության ներդրման կարիք ունի	64
Digital Skills Programs are Crucial for the Development of the Real and Financial Sector in Armenia	65
Թվային հմտությունները բարելավող ծրագրերը վճռորոշ են Հայաստանում իրական ու ֆինանսական հատվածների զարգացման գործում	66

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ANALYSIS**

Համայնքների տեղական ինքնակառավարումը և դրանց ինքնուրույնությունը

Հակոբ Հակոբյան | Մարտ 14, 2017

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը ժողովրդավարության կայացման նախադրյալներից մեկն է: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (European charter of local self-government) համաձայն՝ «տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով[1]»:

Հայաստանը ժողովրդավար երկիր է և դրսևորում է պետական և տեղական ինքնակառավարման վերոնշյալ հատկանիշները: ՏԻՄ ձևավորման հիմքն է 1995թ. հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը: Դրանից հետո՝ արդեն 1996թ., «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը վերջնականապես հաստատեց տեղական ինքնակառավարման ինստիտուտը ՀՀ-ում:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքները (1996թ., 2002թ.)

Սահմանադրությունը և 1996 թվականի օրենքը ՀՀ-ում ինքնուրույն տեղական ինքնակառավարման համայնք ձևավորեցին: Այդուհանդերձ, 1996 թվականի օրենքն ունի «նրբություններ»՝ կապված լիարժեք ինքնուրույնության հետ. ինքնակառավարման սկզբունքների մեջ նշվում է, որ համայնքի ղեկավարն ունի գործառնական դերի երկու ուղղություն՝ ինքնավար կառավարման մարմին և պետական իշխանության ներկայացուցիչ: Որպես պետական իշխանության ներկայացուցիչ՝ ղեկավարը կախվածություն մեջ է հայտնվում կենտրոնական մարմնից, ինչը կենտրոնացվածության տարր է ապահովում տեղական ինքնակառավարման համակարգում: Արդյունքում այս բնորոշումը հանվել է 2002 թվականի օրենքի տեքստից՝ առավել համա-

պատասխանելով Եվրոպական հռչակագրին:

Կենտրոնացվածությունը փաստող ևս մեկ կետ է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունը, երբ համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել մարզպետի (Երևանում՝ քաղաքապետ) ներկայացմամբ: Չնայած որպես հակակշիռ առկա է դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը, այն նույնպես կենտրոնական իշխանության տարր է և փոխկապակցված է միասնական կառավարման ապարատի հետ:

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա

Չարգացման հաջորդ փուլը անմիջականորեն կապված է արդեն հիշատակված «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի (հռչակագիր)» հետ: Հայաստանը, 2002 թվականին վավերացնելով Եվրոպական խարտիան, պարտավորվել է իրագործել վերջինիս հոդվածների դրույթները[1]:

Վավերացված դրույթների բովանդակությունը և տրամաբանությունը կարելի է տեսնել 2002 թվականի օրենքում և Սահմանադրության շարադրանքի մեջ: Այնուամենայնիվ, եկեք կանգ առնենք այն դրույթների վրա, որոնք ՀՀ-ն չի վավերացրել: Մասնավորապես՝ հռչակագրի 5-րդ հոդվածը ապահովում է յուրաքանչյուր համայնքի սուվերենությունը տարածքային փոփոխությունների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում՝ նաև համայնքում հանրաքվեի իրականացման ճանապարհով:

Խոշորացման հայեցակարգի իրագործումը պետք է իրականացվեր տեղական մարմինների և բնակչության մասնակցությամբ: Զանի որ ՀՀ-ն չի վավերացրել այս կետը, տարածքային փոփոխությունների նպատակահարմարությունը դուրս է մնում տեղական ինքնակառավարման իրավասության շրջանակներից, ինչը թուլացնում է համայնքի ինքնուրույնությունն ու բնակչության ներգրավվածությունը տեղական ինտիմների լուծման հարցերում:

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե արդյոք տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն

բավարար գիտելիքներ տարածքային փոփոխությունների և այլ տեսակի որոշումների կայացման համար: Նույն հռչակագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետը ՏԻՄ կադրերին ապահովում է որակավորման բարձրացման հնարավորություններով, այն է՝ ուսուցում, վարձատրություն և ծառայողական առաջխաղացում: Անկասկած՝ նմանատիպ ծրագրերը զուգակցվում են խոշոր ծախսերով: Հասկանալու համար, թե որ ռեսուրսներից կարելի է օգտվել կադրային բարեփոխումների համար, անհրաժեշտ է վերանայել աշխատակիցների կազմը և քանակը, վերջիններիս աշխատանքի արդյունավետությունն ու կրճատման հնարավոր ուղիները: Արդյունքում պարզ կդառնա, թե որակավորումը որքանով կարող է ապահովվել ներքին ռեսուրսների հաշվին: Վերոնշյալ կետը նույնպես վավերացված չէ ՀՀ կողմից:

ՀՀ Սահմանադրությունը և խոշորացման հայեցակարգը

Սահմանադրական վերջին բարեփոխումները համայնքային տնտեսության զարգացման ևս մեկ քայլ էին: Մասնավորապես՝ Սահմանադրության 182-րդ հոդվածում ասվում է, որ «համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով»: Սրա հիմքում ընկած են ինչպես ժողովրդավարության սկզբունքները, այնպես էլ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրը:

Կառավարության՝ համայնքների խոշորացման նոր հայեցակարգի հետ (2011 թ.) ՀՀ-ում վերջնականապես հաստատվեց տեղական ինքնակառավարման մոդելը: Այն ուղղված էր համայնքային տնտեսության կայացմանը, միավորումների միջոցով ֆինանսական և ռեսուրսային բազայի ընդլայնմանն ու առավել արդյունավետ օգտագործմանը: Խոշորացման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները և ցուցանիշները. համայնքների հեռավորությունները միմյանցից և մոտակա քաղաքային բնակավայրից, տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունը, դրանց անցանելիությունը, յուրաքանչյուր համայնքի դեպքում նրա էթնիկ առանձնահատկությունները, հա-

մայնքների միջև համագործակցության աստիճանը և պատմությունը: Արդյունքում ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգն իր բնույթով համապատասխանում է խառը տիպի մոդելին [iii], որտեղ համայնքներն ունեն իրենց լիազորությունները և ինքնուրույնության աստիճանը, միևնույն ժամանակ գործում են պետական համակարգի ներսում և հաշվետու են վերին մակարդակին: Չնայած այն իրավական նախադրյալներին, որոնք առկա են համայնքների ինքնուրույնության աստիճանի բարձրացման համար, փաստացի ինքնուրույնությունը շատ թույլ է զարգացած: Խնդիրներն ի հայտ են գալիս ոչ թե օրենքների մշակման, այլ դրանցում նշված իրավունքների իրացման և պարտականությունների ստանձնման փուլում: Այս պարագայում մենք բախվում ենք իրական պատկերին, որտեղ բացակայում է բնակչության իրազեկվածությունը համայնքային կառավարման խնդիրների վերաբերյալ: Ներգրավվածության առումով առկա է նաև բնակիչների անտարբերությունը վերոնշյալ հարցերում: Կարելի է ենթադրել, որ այս գործոնները իրար հետ փոխկապակցված են և ազդում են միմյանց վրա. ինչքան բնակիչը քիչ է հետաքրքրված, այնքան իրազեկվածությունը ցածր է, և հակառակը: Բացի այդ՝ համայնքի ղեկավար մարմինները (համայնքապետը և ավագանին) որոշ դեպքերում համայնքային տնտեսությունը արդյունավետ կառավարելու համապատասխան գիտելիքներ և հմտություններ չունեն, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է առաջ բերում:

Համայնքների ֆինանսավորման (բյուջետավորման) առանձնահատկությունները

Ներկայումս համայնքային բյուջետավորումը փաստացի իրականացվում է պետական հսկողությամբ՝ տարածքային կառավարման օղակի՝ մարզպետարանի միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ գույքահարկը և հողի հարկն ամբողջությամբ փոխանցվում են համայնքային բյուջեին, վերջիններիս միջոցով չի ծածկվում ընդհանուր ծախսերի նույնիսկ կեսը: Տեղական հարկերը ապահովում են բյուջեի 30-35%-ը [iv]: Առկա է նաև համայնքների կողմից տեղական հարկերի հավաքագրման խնդիր, ինչը առաջացնում է հարկերի գծով պարտքեր՝ ապառքներ [v]: Ապառքների գոյացման պատճառներից են հարկատուների հարկա-

յին վճարումների ուշացումները (և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական), ինչը կարելի է մեկնաբանել որպես ֆինանսական սխալ կառավարման արդյունք: Որոշ չափով ապահովված են խոշոր քաղաքային բնակավայրերը: Խոսքը այնպիսի քաղաքների մասին է, որոնցում կենտրոնացած են հարկման աղբյուր հանդիսացող օբյեկտներ՝ գործարաններ, գովազդային վահանակներ, առևտրային կետեր և այլն: Վերջիններս, սակայն, նույնպես ունեն պետական մակարդակի աջակցության խնդիր: Համահարթեցման մասին օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրումը իրականացվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա.

- մեկ շնչին բաժին ընկնող եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի մակարդակ,
- բնակչության թվաքանակ,
- պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտություն[vi]:

Ըստ ելույթի վերջին գործոնը կրում է ճշգրտող գործառույթ: Բացի այդ՝ գոյություն ունի դոտացիայի տրամադրման նվազագույն շեմ՝ 3.5 մլն դրամ, որից ցածր հաշվարկված դոտացիան տրամադրվում է հենց այդ շեմի չափով: Դոտացիան չունի կոնկրետ նպատակայնություն և ուղղվում է համայնքային բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը:

Գոյություն ունի նաև սուբվենցիաների տրամադրման հնարավորություն, որոնք, ի տարբերություն դոտացիաների, ունեն նախապես սահմանված նպատակ և չեն կարող օգտագործվել այլ կարիքների համար: Ֆինանսական տեսակետից փոքր տեսակարար կշիռ են կազմում նաև պատվիրակված լիազորությունները, որոնց կատարման համար պետությունը պարտավորվում է ֆինանսավորել համայնքը:

Բացի տեղական հարկերից և պետական դրամաշնորհներից՝ բյուջետավորման մասին օրենքը նախատեսում է նաև որոշ հարկատեսակների գծով մասհանումներ համայնքային բյուջեներին (եկամտահարկ, շահութահարկ), ինչպես նաև սահմանում է տեղական տուրքեր: Առաջին դեպքում յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նշվում է մասհանման չափը, սակայն այն գրեթե ամեն տարի զրո է: Պատճառը

նորից համայնքների խիստ կենտրոնացվածությունն է, հատկապես մայրաքաղաքի և այլ բնակավայրերի համեմատությամբ: Օրինակ՝ տեղական տուրքերի դեպքում հյուրանոցային հարկը դեռևս չունի հստակ օրենսդրական բավարար հիմք էական եկամտի աղբյուր ծառայելու համար: Ի լրումն վերջինիս՝ սահմանվում են նաև այլ տեղական վճարներ, ինչպիսիք են շինարարություն իրականացնելու, վերականգնելու և քանդելու համար իրականացվող վճարները, համայնքի տարածքում առևտրային գործունեություն իրականացնելու համար գանձվող վճարները և այլն:

Այսպիսով՝ ամփոփելով համայնքների գործունեության երկու հիմնական՝ օրենսդրական և ֆինանսական կողմերը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգմանը. չնայած այն փաստին, որ համայնքային մակարդակում գործում են բավականին բարենպաստ օրենսդրական պայմաններ թե՛ համայնքի բնակչության, թե՛ համայնքի ղեկավարների համար տեղական խնդիրների լուծման և բնակչության կարիքների բավարարման տեսանկյունից, այդուհանդերձ, դրանց իրացման առումով ունենք մեծ բացեր: Կարելի է ենթադրել, որ պատճառներից մեկը ոչ բավարար ապակենտրոնացվածությունն է և՛ վարչական, և՛ ֆինանսական տեսանկյունից:

Համայնքներում օրենսդրական իրավունքի իրացման հետ սերտ կապված է նաև նույն համայնքների՝ պետական մակարդակի ինստիտուտներից ֆինանսական անկախությունը: Եթե ՏԻՄ-երի ֆինանսական հնարավորություններն այդքան սերտաճած չլինեին կենտրոնացված ապարատին, ապա կառավարումը ավելի արդյունավետ կլիներ: Պատճառն այն է, որ համայնքային մակարդակում բնակչության կարիքներն ավելի հեշտ է բացահայտել և բավարարել՝ ստանալով անմիջական արձագանք կառավարման հետագա շտկումների համար: Ապակենտրոնացվածության աստիճանի բարձրացման համար հնարավոր ուղի կարելի է համարել համայնքներում ֆինանսական անկախության պոտենցիալի բացահայտումը: Հիմնական շեշտը պետք է դնել սեփական եկամուտների ավելացման վրա՝ գույքային և հողային բազայի արդյունավետ օգտագործման միջոցով: Բացի այդ՝ անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ մտցնել հարկային քաղաքականության մեջ, մասնավորապես՝

առևտրային ընկերությունների պարագայում՝ օժանդակելով ոչ միայն սուբյեկտի իրավական գրանցումը Երևան քաղաքից դուրս, այլև դրա հիմնական գործունեության իրականացումը մարզերում:

Ապակենտրոնացման դրական և բացասական կողմերը

Ամփոփելով ստեղծված իրավիճակը՝ մենք ստանում ենք հետևյալ պատկերը. յուրաքանչյուր համայնք ինքնուրույն է վարչական որոշումների կայացման հարցում, սակայն ֆինանսական ապահովվածությունը թողնված է կենտրոնական իշխանությանը: Բացի այդ՝ տեղական իշխանության մարմինները սեփական խնդիրները լուծելու տեսանկյունից ունեն ցածր մոտիվացիա և շահագրգռված չեն ամբողջական պատասխանատվություն կրելու՝ թե՛ ֆինանսական, թե՛ վարչական առումներով: Չարգացման հնարավոր ուղիները հասկանալու համար փորձենք համեմատական եզրեր անցկացնել այլ երկրներում իրականացվող տեղական ինքնակառավարման քաղաքականության հետ: 2014 թվականին իրականացված հետազոտությունը, որն ուղղված էր եվրոպական երկրների ՏԻՄ նոր մոդելների ներկայացմանը, ցույց է տվել հետևյալ արդյունքները.

	Մոդել 1	Մոդել 2	Մոդել 3	Մոդել 4	Մոդել 5
ՏԻՄ մակարդակներ	2-3	1-2	1-2	1-2	1
Տարածքային բաժանում	Տարբերակված	Փոքր համայնքներ	Միջին համայնքներ	Մեծ համայնքներ	Փոքր համայնքներ
Գործառնական ապակենտրոնացում	Բարձր	Բարձր	Միջին	Միջին	Ցածր
Ֆինանսական ապակենտրոնացում	Նշանակալի	Ցածր	Ցածր	Նշանակալի	Աննշան
Երկրներ	Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա	Չեխիա, Էստոնիա, Լատվիա	Ալբանիա, Բուլղարիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Մոլդովա, Ռումինիա, Սլովենիա, Ուկրաինա	Վրաստան, Լիտվա, Սերբիա	Հայաստան, Ադրբեջան

Ընդհանուր առմամբ առաջին չորս մոդելների երկրներում համայնքներին տրված են լայն լիազորություններ ինչպես ֆինանսական, այնպես էլ գործառնական որոշումների կայացման համար (առաջին մոդելից մինչև չորրորդ՝ նվազման սկզբունքով): Բացի այդ՝ իրավասությունների շրջանակն ընդլայնվում է պարտքային քաղաքականության իրականացման ինքնուրույնության հետ: Վերջին մոդելում, որտեղ ընդգրկված են Հայաստանն ու Ադրբեջանը, նկատվում է ֆինանսական և գործառնական լայն կենտրոնացվածություն:

Ներկա իրավիճակի պահպանման դեպքում կունենանք թույլ զարգացած, կախյալ համայնքներ, ինչը կմեծացնի մայրաքաղաքի շուրջ կենտրոնացվածությունը: Ի լրումն դրա՝ պետական կենտրոնացած ապարատը կմտա ծանրաբեռնված և նվազ արդյունավետությամբ աշխատող: Կենտրոնացվածության դրական կողմ կարելի է համարել որոշումների կայացման արագությունը և միասնականությունը: Որպես տարբերակ՝ կարելի է դիտարկել

Նաև մասնակի՝ միայն վարչական ապակենտրոնացումը, ինչը, սակայն, թերի է, քանի որ լիարժեք որոշումների կայացումը պետք է զուգորդվի սեփական ֆինանսական ռեսուրսների առկայությամբ:

Հակառակ դեպքում, համայնքներին լիարժեք ինքնուրույնություն տալով, հնարավոր կլինի տեղում լուծել տեղական խնդիրներ և արձագանք ստանալ բնակչության կողմից: Այս տարբերակը զուգակցվում է կոռուպցիոն ռիսկերի, ինչպես նաև արդեն հիշատակված համայնքային պաշտոնյաների ոչ բավարար գիտելիքների հետ: Բնակչության անտարբերությունը ևս մեկ խոչընդոտ է լիարժեք ինքնուրույն համայնքի կայացման հարցում:

Խնդիրը կարելի է լուծել հետևյալ հնարավոր տարբերակով: Դիցուք՝ համայնքներին տրվել է ֆինանսական ինքնուրույնություն, և խնդիրների լուծման առաջնայնություն սահմանելու հնարավորություն է ստեղծվել: Կոռուպցիոն ռիսկերի ճնշման համար որպես հակակշիռ պետք է հանդես գա երրորդ մարմին, որը կներկայացնի տեղական բնակչության շահերը: Այդպիսի սուբյեկտներ կարող են լինել հասարակական կազմակերպությունները կամ համայնքում ձևավորված համայնքային խորհուրդը, որոնք կիրականացնեն բնակչության իրազեկումը և շահերի պաշտպանությունը:

Հղումներ

[i] Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա (Հոդված 3), Ստրասբուրգ, 1985թ.:

[ii] 2, 3.1, 3.2, 4.1-4.6, 7.1, 7.3, 8.1-8.3, 9.1-9.8, 10.1, 10.2 և 11 հոդվածները:

[iii] Գոյություն ունի երեք մոդել՝ անգլոսաքսոնական, մայրցամաքային (Եվրոպական) և խառը:

[iv] ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վերլուծություն, 2007-2016թթ.:

[v] Սահմանված ժամկետում չկատարված հարկի (կամ հաստատագրված վճարի) վճարման գումար:

[vi] Այս համայնքների ցանկը սահմանում է ՀՀ Կառավարությունը՝ հիմք ընդունելով առաջին երկու գործոնների հարաբերական ցուցանիշները:

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն, 2015թ.:
2. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին, 2002թ.:
3. ՀՀ օրենքը ֆին. համահարթեցման մասին, 2000թ.:
4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Ամբերդ» ՀԳՏՀ հետազոտական կենտրոն, Երևան, 2014թ.:
5. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
6. Եվգինե Վարդանյան, Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացը ՀՀ-ում, Բանբեր ԵՊՀ, 2015թ.:
7. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 1985թ.:
8. Different forms of decentralization and their impact on government performance: Micro level evidence from 113 countries, Illinois State University, Forman Christian College, Pakistan, University of Akron, USA, 2016.
9. Pawel Swianiewicz, An Empirical Typology of Local Government Systems in Eastern Europe, 2014, University of Warsaw, Poland.

Local Self-Government of the Communities and Their Independence

Hakob Hakobyan | March 14, 2017
Translator | Lusine Barkhoyan

The realization of the local self-government system is one of the preconditions of the realization of democracy. According to the European Charter of Local Self-Government, "self-government is the right and ability of local self-government bodies to regulate and control most part of the state issues (within the scopes of the law) with its own responsibility and hence for local people's interests[i]".

Armenia is a democratic country which manifests the above mentioned state and local self-government properties. The basis of the formation of LSGB (local self-government body) is the Constitution admitted by the referendum in 1995. Afterwards, already in 1996 the law "On Local Self-Government" finally ratified the local self-government institution in the Republic of Armenia.

Laws on Local Self-Government (1996, 2002)

The Constitution and the law of 1996 formed an independent self-government community in the RA. However, the law in 1996 has "subtle issues" related to the utter autonomy. It is mentioned in the principles of self-government, that the leader of the community has two directions of operational roles: autonomous governing body and representative of authority. As a representative of state authority, the leader depends on the central body, which provides an element of centralization within the local self-government system. As a result, this description has been removed from the text of the law of 2002 more closely complying with the European Convention.

However, one more point which proves the centralization is the correlation between state and local self-government bodies, when the head of the community can be dismissed based on the claim of the regional governor (mayor in Yerevan). In spite of this, the possibility of making an appeal

in legal form exists as a counterbalance, which is also an element of central authority and correlates with the united governmental system.

European Charter of Local Self-Government

The next phase of development directly relates to already mentioned "European charter of local self-government". In 2002, confirming the European charter Armenia was committed to implement the provisions of the latter's articles[ii].

The content and the logic of the confirmed provisions are seen in the law of 2002 and in the Constitution. However, let us take a look at the provisions which the RA has not ratified. Particularly the 5th article of the declaration provides the sovereignty of each community towards territorial changes, also with the implementation of the referendum, if applicable.

The implementation of the consolidation concept should be held with the participation of local bodies and population. As the RA has not ratified this point, the expediency of territorial changes is out of the jurisdiction of the local self-government, which weakens the independence of the community and the integration of population in the solution of local problems.

A question may arise, whether local self-government bodies have enough knowledge for territorial changes and for making other kinds of decisions. The second point of the sixth article of the same declaration provides the LSGB's personnel with the possibilities of improving the qualification, i.e. education, payment and promotion at work. Undoubtedly, such programs imply heavy expenses. In order to understand which resources to use for personnel reforms, it is necessary to review staff composition, the number of employees, the effectiveness of the latter's work and the possible ways of reduction.

As a result, it'll become clear to which extent the qualification can be provided at the expense of inner resources. The above mentioned point is also not ratified by the RA.

Constitution of the Republic of Armenia and Community Consolidation Concept

Recent constitutional reforms were one more step towards the development of the community's economy. In particular, the 182nd article of the Constitution reads "community residents can directly participate in community affairs by solving public issues which have community importance by means of local referendum". The basis of this are not only the principles of democracy, but also the problem of increasing the effectiveness of the governing system.

With the new concept of consolidation (2011) by the government, the local self-government model was finally ratified by the RA. It was aimed at sustaining the community economy, enlarging the financial and resource base through mergences and using it more effectively. The following principles and indicators stand on the basis of the enlargement the distance of the communities from each other and from the nearby urban areas, the availability of transport infrastructures, their accessibility, ethnic peculiarities of each community, the degree and history of cooperation between communities.

As a result, the local self-government system typically corresponds to a mixed-type model^[iii], where communities have their authorizations and degree of independence, at the same time they act inside the state system and are held accountable to the upper level.

Despite the legal prerequisites, which exist to raise the degree of independence of communities, the actual independence is very weak. Problems arise not in the process of drafting laws, but in the stage of the realization of the aforementioned rights and commitments. In this case we face up to zero public awareness on the issues of community government. What refers to the involvement, the residents are indifferent toward the above-mentioned issues.

We can assume that these factors are interconnected and influence each other: the more the resident is indifferent, the less the awareness is and vice versa. Besides, in some

cases community governing bodies (head of the community and counselor) do not have relevant knowledge and skills to effectively manage the community's economy, which causes additional obstacles.

Community Financing (Budgeting) Peculiarities

Nowadays community budgeting is de jure under state control by means of the territorial government body, i.e. regional (marz) administration. Despite the fact that property tax and land tax are fully transferred to the community budget, the latter does not even cover half of the total expenditures. Local taxes provide 30-35% ^[iv] of the budget. There is also a problem of collecting the local taxes by the local self-government bodies, which generates debts, i.e. arrears^[v]. Some of the reasons why debts accumulate are overdue tax payments (both physical and legal), which can be interpreted as a result of wrong financial management.

Large urban areas are somehow safe. These are the cities where the objects of taxation are concentrated, i.e. factories, billboards, commercial areas, etc. The latter, however, also have problems with state support. According to the law on equalization, granting subsidies is based on the following indicators:

- Income tax, land tax and property tax per capita
- The number of people
- The necessity of state priority support^[vi]

In essence, the last factor carries a specification. Besides, there is a minimum subsidy threshold of 3.5 million AMD, below which the subsidy is provided in the amount of that threshold. The subsidy does not have a target field and is directed to the financing of the shortage of community budget.

There is also a possibility of providing subventions, which, unlike subsidies, have a predetermined aim and cannot be used for other needs. From the financial point of view, the delegated authorizations are limited, for the implementation of which the state is obliged to finance the community.

Besides local taxes and state grant programs, the law on state budget also envisages portioning out some types of taxes and their attribution to community budgets (income tax, profit tax), as well as determining local taxes. In the first case, every year the amount subject to portioning out is defined by the law on the state budget of the RA, which is almost zero per year.

The reason is again the high centralization of communities, especially compared to the capital and other settlements. For example, in case of local taxes, hotel tax does not have a precise legislative basis to serve as a source of considerable income. In addition to the latter, other local fees are also determined by the law, such as payments for construction, reconstruction and demolition, fees for implementing commercial activities within the area of community, etc.

Thus, summarizing two main aspects of communities activities i.e. legislative and financial, we come to the following conclusion: despite the fact, that at the community level there are favorable legislative conditions both for the residents of the community and for community leaders from the point of view of solving local problems and satisfying the needs of the residents, we have great gaps in terms of their application. One can assume that one of the problems is the insufficient decentralization both from the financial and administrative points of view.

The financial independence of communities from state institutions is closely related to the application of legislative rights in communities. If the financial possibilities of the LSGBs were not so closely tied to the centralized system, then the management would be more efficient. The reason is that in the community level it is easier to identify and satisfy the needs of the residents by receiving immediate feedback for further corrections in management.

The discovery of the potential of financial independence in communities can be considered a possible way for raising the degree of decentralization. The main emphasis must be put on increasing each separate community's income

through the efficient use of property and land. Besides, it is necessary to make some changes in the tax policy, particularly in case of commercial companies, and to support not only the legal registration of the subject out of Yerevan, but also the implementation of its main activities in the regions.

Positive and Negative Sides of Decentralization

Summarizing the current situation, we come to the following conclusion: each community is independent in making administrative decisions, but financial support is left to the central authority. Besides, local authorities have a low level of motivation and are not interested in carrying full responsibility in solving their own problems both in financial and administrative terms. In order to understand the development prospects, let us compare the Armenian model with local self-government policies of other countries. The 2014 research aimed at introducing new LSGB models of the European countries, showed the following results.

	Model 1	Model 2	Model 3	Model 4	Model 5
LSGB levels	2-3	1-2	1-2	1-2	1
Territorial division	Differentiated	Small communities	Medium communities	Large communities	Small communities
Operational decentralization	High	High	Middle	Middle	Low
Financial decentralization	Significant	Low	Low	Significant	Insignificant
Countries	Hungary Poland Slovakia	Czech Republic Estonia Latvia	Albania Bulgaria Croatia North Macedonia Moldova Romania Slovenia Ukraine	Georgia Lithuania Serbia	Armenia Azerbaijan

In general, in the countries with the first four models the communities enjoy the power of making both financial and administrative decisions (from the first model to the fourth, in descending order). In addition, the more independent the community is in implementing debt policy, the more extensive the scopes of the jurisdictions are. The last model, which includes Armenia and Azerbaijan, has a high financial and operational centralization.

If we maintain the current situation, we will have poorly developed, dependent communities, which will deepen the concentration in and around the capital. In addition, the centralized government apparatus will remain overloaded and less productive. The quickness of decision making and the unanimity of decisions can be considered as the advantages of a centralized system. Partial decentralization, i.e., only administrative one, can also be considered an option, which, however, is not the best one, as a complete decision-making requires an availability of financial resources.

Providing the communities with complete independence will enable them with the possibility of solving local problems and receiving a response from the population. This option is accompanied by corruption risks, as well as with the risk of insufficient competences of the mentioned community officials. The indifference of the population is another impediment to the establishment of a completely independent community.

The problem can be solved in the following way. Let us suppose that communities were given financial independence, and there is an opportunity to prioritize the problems. A third body must act as a counterbalance for pressing corruption risks. The body will represent the interests of the local population. Such subjects can be non-governmental organizations or community councils formed within the community, which will raise public awareness and protect their interests.

References

- [i] European charter of local self-government (Article 3), Strasbourg, 1985.
- [ii] 2, 3.1, 3.2, 4.1-4.6, 7.1, 7.3, 8.1-8.3, 9.1-9.8, 10.1, 10.2, 11 articles.
- [iii] There are three types of models: Anglo-Saxon, continental (European) and mixed.
- [iv] The analysis of the Ministry of Territorial Administration and Development (2007-2016).
- [v] The amount of money of an unpaid, overdue tax.
- [vi] The RA Government defines the list, based on the relative index of the first two factors.

Bibliography

1. ՀՀ Սահմանադրություն, 2015թ.:
2. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին, 2002թ.:
3. ՀՀ օրենքը ֆինանսական համահարթեցման մասին, 2000թ.:
4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնա խնդիր-ները ՀՀ-ում, «Ամբերդ» ՀՊՏՀ հետազոտական կենտրոն, Երևան 2014թ.:
5. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
6. Եվգինե Վարդանյան, Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացը ՀՀ-ում, Բանբեր ԵՊՀ, 2015թ.:
7. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 1985թ.:
8. Different forms of decentralization and their impact on government performance: Micro level evidence from 113 countries, Illinois State University, Forman Christian College, Pakistan, University of Akron, USA 2016.
9. Pawel Swianiewicz, An Empirical Typology of Local Government Systems in Eastern Europe, 2014, University of Warsaw, Poland.

Մրցակցային գաղափարների համեմատական վերլուծություն

Հակոբ Հակոբյան | Յուլիս 1, 2017

Մրցակցությունը կարևոր տեղ է զբաղեցնում ազատ շուկայական տնտեսության համակարգում: Այն փաստացի շուկայի զարգացման հիմքն է: Առաջին անգամ տնտեսական համակարգում մրցակցության մասին հիշատակել է Ադամ Սմիթը 1776 թվականին՝ իր «Յետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների շուրջ» աշխատության մեջ: Սմիթը ներկայացրել է ապակենտրոնացված, պետության կողմից չկարգավորվող մրցակցային դաշտ՝ բազմաթիվ մանր մասնակիցներով, որտեղ ամեն մասնակից չէ, որ ունի բավարար ներուժ՝ ազդեցություն գործելու շուկայի ընդհանրական ցուցանիշների վրա:

Իր աշխատության երկրորդ գլխում «Աշխատանքի բաժանման պատճառների մասին» Սմիթը ներկայացնում է իրավիճակ, որտեղ մրցակցային դաշտի յուրաքանչյուր մասնակից ձևավորում է իր վարքագիծը՝ հաշվի առնելով սեփական կարիքները: «Նա (մարդը) ավելի շուտ կհասնի իր նպատակին, եթե հաշվի առնի նրանց (այլ մարդկանց) եսասիրությունը և կարողանա ապացուցել, որ հենց իրենց շահերից է բխում գործել այնպես, ինչպես որ ինքն է պահանջում: Ցանկացած ոք, սյուսին առաջարկելով որևէ տիպի գործարք, գործում է հենց այս տրամաբանությամբ. տուր ինձ այն, ինչ ես ուզում եմ, և կստանաս այն, ինչ ուզում ես դու...» [1]:

Փաստացի Սմիթի մրցակցային տեսության գաղափարը հանգում է նրան, որ յուրաքանչյուր սուբյեկտ ձգտում է առավելագույնի հասցնել սեփական օգուտը, և արդյունքում շահում է ոչ միայն շուկայի մասնակիցը, այլև հասարակությունն ընդհանրապես: Այս համակարգում ազատ մրցակցությունը նպաստում է արտադրության ծախսերի կրճատմանը, օպտիմալացնում է ռեսուրսների բաշխումը յուրաքանչյուր ճյուղի ներսում և ընդհանուր տնտեսության մեջ:

Տեսականորեն Սմիթի առաջարկած վարքագծի դրսևավորումը կարող էր բերել ընդհանուր հասարակական

արդյունքի ավելացման, եթե գործեր այն համակարգը, որտեղ բազմաթիվ մանր մասնակիցներ հնարավորություն չէին ունենա ազդելու շուկայական համակարգի վրա: Գործնականում, սակայն, տարբեր են առանձին սուբյեկտների մրցակցային հնարավորությունները, և տնտեսության ենթակառուցվածքների զարգացման հետ մեկտեղ օբյեկտիվորեն ստեղծվում է մի իրավիճակ, որում արդեն առանձին մասնակիցներ իրենց մրցակցային առավելությունների շնորհիվ գերիշխող դիրք են ստանում շուկայում և կարող են ազդել ինչպես վերջինիս կառուցվածքի, այնպես էլ ընդհանուր հասարակական զարգացման վրա:

Սմիթի՝ մրցակցության վերաբերյալ առաջ քաշած գաղափարներն իրենց դրսևորումն են ստացել նաև միջազգային առևտրի տեսություններում: Այդ գաղափարների խտացումն ստացավ «բացարձակ առավելությունների տեսություն» անվանումը, որի հիմքում ընկած է «անտեսանելի ձեռքի» (Laissez-faire) գաղափարը, ըստ որի՝ միջազգային առևտուրը կարգավորվում է համաձայն գնային գործոնի, և համապատասխան ապրանքները կարտադրվեն այն երկրներում, որտեղ դրանց արտադրությունն առավել ձեռնտու ու շահավետ է:

Շարունակելով Սմիթի գաղափարը՝ Դավիթ Ռիկարդոն ձևավորեց «համեմատական առավելությունների» տեսությունը, որի հիմքում արդեն միայն գնային գործոնն ու դրա միջոցով կարգավորումը չեն: Հաշվի են առնվում նաև մրցակցության կողմերի (այս պարագայում՝ երկրների) առավելությունները՝ համեմատած այլ երկրների հետ: Սա հնարավորություն է տալիս երկրներին փնտրել այլընտրանքներ առևտրային գործունեության իրականացման համար և հաշվի առնել կուտակած փորձը, մասնագիտացումը և այլ գործոններ, որոնք մրցակցության մեջ կտան համեմատական առավելություն:

Ռիկարդոն իր տեսության մեջ ներկայացրած սկզբունքներով մոտենում է «խաղերի տեսության» առաջարկած մրցակցային վարքագծի մոդելին և գաղափարներին: Առաջին անգամ խաղերի տեսության սկզբունքները սահմանվել են հանրահայտ Մերիլ Ֆլորի, Մելվին Դրեշերի և Ալբերտ Թաբերի կողմից: Յետա-

գայում այս գաղափարներին գործնական ձևակերպում է տվել ամերիկացի մաթեմատիկոս Ջոն Նեշը:

Նա ներկայացրել է մրցակցության ձևավորման գաղափարը՝ հաշվի առնելով ոչ թե առանձին սուբյեկտների ռազմավարությունը և գործելու տրամաբանությունը, այլ շուկայի մասնակիցների վարքագիծը ընդհանուր համակարգում: Այս տեսության հիմքում ընկած է հետևյալ սկզբունքը. «Յուրաքանչյուր մասնակից գործում է՝ հաշվի առնելով մյուս մասնակիցների հնարավոր ռազմավարությունները»: Նեշի տեսության ցայտուն օրինակ է «բանտարկյալի դիլեման», որի դեպքում մասնակիցներից յուրաքանչյուրն ընտրում է օպտիմալ տարբերակը՝ հաշվի առնելով նաև մյուս մասնակցի գործելու տրամաբանությունը և հնարավոր քայլերը:

Դիցուք՝ ներկայացնենք այն մրցակցային իրավիճակը, որի դեպքում գործում են երկու ընկերություն, և դրանցից յուրաքանչյուրն ունի գնային շեմի սահմանման երկու հնարավորություն՝ «բարձր» և «ցածր» գներ:

Այս դեպքում հնարավոր են վարքագծի հետևյալ դրսևորումները. կամ երկու ընկերություններն էլ սահմանում են «բարձր» գներ, կամ երկու ընկերություններն էլ սահմանում են «ցածր» գներ: Կան երկու այլ տարբերակ ևս. ընկերություններից մեկը սահմանում է «բարձր», իսկ մյուսը՝ «ցածր» գներ և հակառակը:

	Երկրորդ ընկերություն. «բարձր» գներ	Երկրորդ ընկերություն. «ցածր» գներ
Առաջին ընկերություն. «բարձր» գներ	Յուրաքանչյուրի շահույթը՝ 8 մլն [ii]	Առաջին ընկերության շահույթը՝ 10 մլն, երկրորդինը՝ 1 մլն
Առաջին ընկերություն. «ցածր» գներ	Առաջին ընկերության շահույթը՝ 1 մլն, երկրորդինը՝ 10 մլն	Յուրաքանչյուրի շահույթը՝ 5 մլն

Եթե երկու ընկերություններն էլ գործեն ռացիոնալ տրամաբանությամբ և հաշվի առնեն երկրորդի վարքագիծը, ապա կստացվի հետևյալ պատկերը. եթե առաջին ընկերությունը սահմանի բարձր գներ, ապա մյուս ընկերությանը ևս ձեռնառու է բարձր գների սահմանումը, իսկ եթե առաջին ընկերությունը սահմանի ցածր գներ, ապա այս պարագայում ևս երկրորդ ընկերության համար բարձր գների սահմանումը շահավետ կլինի:

Արդյունքում՝ մրցակցային այս իրավիճակում ռացիոնալ վարքագծի դրսևորման դեպքում երկու ընկերություններն էլ պետք է սահմանեն բարձր գնային շեմ՝ առավելագույն շահույթ ստանալու համար:

Եթե Ա. Սմիթի առաջարկած տրամաբանության դեպքում յուրաքանչյուր սուբյեկտ գործում է իր շահերից ելնելով, և այդ տարբերակը նրա համար օպտիմալ է, ապա Նեշի կարծիքով՝ որոշումների կայացումը կախված է ոչ միայն սեփական շահերից, այլև մյուս մասնակիցների որոշակի վարքագծի դրսևորումից, ինչն էլ արտահայտվում է նրա առաջարկած մոդելում:

Այսպիսով՝ մրցակցության տեսությունը և մրցակցային որոշումների կայացման տրամաբանությունը Ա. Սմիթի մոտ կրում է բացարձակ «Էգոիստական» բնույթ, միևնույն ժամանակ Ռիկարդոյի մոտեցումն առավել ընդգրկուն է. հաշվի են առնվում և՛ երկարաժամկետ մրցակցության զարգացումը, և՛ մասնակիցների վարքագիծը, և՛ մրցակցության ոչ գնային գործոնները:

Նեշի պարագայում մրցակցային պայթարը պայմանավորված չէ միայն ստեղծված պայմաններով: Հաշվի են առնվում ոչ միայն առանձին սուբյեկտների որոշումները, այլև նրանց որոշումների ազդեցությունը միմյանց վրա:

Հղումներ

[i] Ադամ Սմիթ, «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների շուրջ», Գլուխ 2, «Աշխատանքի բաժանման մասին»:

[ii] Տվյալ իրավիճակում երկու ընկերությունների

Կողմից բարձր գների սահմանումը կարող է հանգեցնել պահանջարկի կրճատման և, հետևապես, շահույթի նվազման:

Գրականություն

1. Адам Смит, "Исследование о природе и причинах богатства народов" <http://e-libra.ru/read/179321-.html>
2. 7 Модель Портера <http://www.studfiles.ru/preview/6329014/>
3. Равновесие по Нэшу. Теория игр для экономистов (Джон Нэш) <http://fb.ru/article/199282/ravnovesie-po-neshu-teoriya-igr-dlya-ekonomistov-djon-nesh#image879206>
4. Մարտիրոսյան Ա. Ռ., «Ռիկարդոյի «համեմատական առավելությունների տեսությունը» տնտեսագիտական մտքի էվոլյուցիոն առաջնահերթությունների սահմանմամբ», Այլընտրանք, գիտական հանդես, # 2, Ապրիլ-Յունիս, 2014 թ.

Comparative Analysis of Competitive Ideas

Hakob Hakobyan | July 1, 2017

Translator | Liana Papyan

Competition has an important role in the system of a free-market economy. In fact, it is the basis of market development. Adam Smith was the first scholar to speak about the competition in the economic system in his work (1776) entitled "An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations." Smith presented a decentralized, competitive field, not regulated by the state with many small participants, none of which had enough influence on the overall market performance.

In the second chapter of his work (Of the Principle which gives Occasion to the Division of Labor), Smith speaks about a situation where each participant of the competing field forms its behavior based on its needs: *"He (a man) will be more likely to prevail if he can interest their (other people's) self-love in his favor, and show them that it is for their own advantage to do for him what he requires of them. Whoever offers to another a bargain of any kind, proposes to do this. Give me that which I want, and you shall have this which you want, is the meaning of every such offer"*[1].

In fact, Smith's theory of competition entails that each subject endeavors to have a maximum gain, and as a result, not only the market participant benefits but also the society in general. In this system free competition helps to reduce production expenditures, optimizes the distribution of resources inside the economy and each of its branches.

Theoretically, the manifestation of the behavior suggested by Smith could lead to better results for society in general if the system, where many small participants had no opportunity to influence the market system, worked. In practice, however, the competitive abilities of certain subjects are different, and along with the development of the economic infrastructures, objectively, a situation comes forth, when certain participants obtain a predominant role in the market due to their competitive advantages and can influence both the market structure and social development in general.

Smith's ideas on competition have also been reflected in international trade theories. It was called the "theory of absolute advantage," which was based on the notion of "invisible hand" (Laissez-faire), according to which international trade is regulated through price factor, and certain products will be produced in those countries, where their production is more beneficial.

Continuing Smith's idea, David Ricardo formed the theory of "comparative advantage," which is based not only on price factor and the regulation through it but also on the advantages of competing parties (in this case, countries) compared to other countries. This enables countries to search for alternatives for trade activities and consider the experience, specialization and other factors that will give a comparative advantage in competition.

The principles in Ricardo's theory are similar to the model and ideas of the competitive behavior underlying the "game theory." The "game theory" principles were first introduced by well-known Merrill Flood, Melvin Dresher and Albert Tucker. Later these ideas were practically defined by an American mathematician John Nash.

He presented the idea of the formation of competition, considering not the strategy of individual subjects and their logic of action but the behavior of the market participants in the overall system. This theory is based on the following principle: *"every participant acts considering the possible strategies of other participants."*

A vivid example of Nash's theory is "the prisoner's dilemma," according to which each participant chooses the optimal option based on the other participant's possible steps and logic of acting.

Let us assume a competitive situation, where there are two companies, and each has two options for defining the price threshold - "high" and "low" prices. In this case, the following behaviors are possible: both companies set "high" prices, both companies set "low" prices, and two more options: one of them sets "high" prices, the other one - "low" prices.

	The second company: "high" prices	The second company: "low" prices
The first company: "high" prices	The profit of each company is 8 million [ii].	The profit of the first company is 10 million, that of the second one is 1 million.
The first company: "low" prices	The profit of the first company is 1 million, that of the second one is 10 million.	The profit of each company is 5 million.

Suppose both companies act reasonably and take into consideration the other's behavior. In that case, the following scenario will be the case: if the first company sets high prices, then the other one also benefits from charging high fees, but if the first company sets low prices, then in this case too, the other company will benefit from setting high prices. As a result, both companies should set a high price threshold to get maximum profit if acting reasonably in this competitive situation.

If, according to the logic of A. Smith's theory, every subject acts for his interests and considers this option as an optimal solution, then, according to Nash, the decision-making process depends not only on one's interests but also on the particular behavior of other participants. The latter is demonstrated in the model suggested by him.

Thus, according to Smith's approach, the theory of competition and the logic of competitive decision making have an absolutely "self-centered" nature, while D. Ricardo's approach is more inclusive and takes into account the competition progress and the participants' behavior in the long term, as well as non-price factors of competition. In the case of Nash, the competitive struggle does not depend solely on the conditions evolved. It is not only the decisions of individual entities that are taken into account but also the impact of their decisions on each other.

References

[i] Adam Smith "An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations", Chapter 2 "Of the principle which gives occasion to the Division of Labor" <http://e-libra.ru/read/179321-.html>

[ii] In this case, high prices from both companies can lead to the reduction of demand, thus decrease of profit.

Bibliography

1. Адам Смит, "Исследование о природе и причинах богатства народов" <http://e-libra.ru/read/179321-.html>
2. 7 Модель Портера <http://www.studfiles.ru/pre-view/6329014/>
3. Равновесие по Нэшу. Теория игр для экономистов (Джон Нэш) <http://fb.ru/article/199282/ravnovesie-po-neshu-teoriya-igr-dlya-ekonomistov-djon-nesh#image879206>
4. Մարտիրոսյան Ա. Ռ., «Ռիկարդոյի «համեմատական առավելությունների տեսությունը» տնտեսագիտական մտքի էվոյուցիոն առաջնահերթությունների սահմանամար», Այլընտրանք, գիտական հանդես, # 2, Ապրիլ-Հունիս, 2014 թ.

Կորպորատիվ կառավարման ճապոնական մոդել

Հակոբ Հակոբյան | Սեպտեմբեր 28, 2017

Ներկայումս առավել հայտնի և տարածում ստացած կորպորատիվ կառավարման մոդելներն են՝ անգլո-ամերիկյանը, եվրոպականը (մայրցամաքային) և ճապոնականը: Առաջին երկուսից սկզբունքորեն տարբերվում է ճապոնական մոդելը, որը հիմնված է բաժնետոմսերի փոխադարձ տիրապետման, խոշոր, տարատեսակ մասնակիցներ ունեցող միավորումների ստեղծման և շահաբաժինների ստորադասման սկզբունքների վրա:

Չարգացման ներկայիս փուլին անցնելուց առաջ ճապոնիայում գործում էր ֆեոդալական համակարգ, որտեղ խոշոր սամուրայական ընտանիքները տիրապետում էին տնտեսության հիմնական մասին: 19-րդ դարի վերջին ձևավորվեցին խոշոր ֆինանսա-արդյունաբերական խմբեր՝ դայբեցուներ, որոնք մի քանի ընտանիքների կողմից կառավարվող, ուղղահայաց կենտրոնացվածություն ունեցող միավորումներ էին:

Կառավարման վերոնշյալ համակարգը չէր կարող երկար գոյատևել հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնիայի ավիրված տնտեսության պայմաններում, քանի որ սահմանափակում էր տնտեսական զարգացումը՝ ելնելով իր կենտրոնացված բնույթից:

Տնտեսական բարեփոխումների արդյունքում նախկին ուղղահայաց կենտրոնացված համակարգը փոխարինվեց հորիզոնական ինտեգրված համակարգով, որի կառուցվածքային միավոր դարձավ կեյթեցուն (թարգմանաբար՝ միավորում, համակարգ):

Արդյունքում՝ ներկայիս ճապոնական տնտեսությունը բնորոշվում է հորիզոնական կենտրոնացվածության բարձր մակարդակով, տարբեր ոլորտների փոխկապվածությամբ ֆինանսաարդյունաբերական խմբերի՝ կեյթեցունների միջոցով, ինչպես նաև հստակ ձևավորված կորպորատիվ կառավարման մշակույթով:

Ներկայումս գործում են յոթ հիմնական կեյթեցուներ.

- Mitsui
- Sumitomo
- Dai-ichi Kangyo
- Mitsubishi
- Industrial Bank of Japan
- Fuyo
- Tokai

Գրեթե բոլոր կեյթեցուների հիմքում ընկած են նախկինում գործող միավորումները, որոնք, զարգացում ապրելով, ուղղահայաց կենտրոնացումից անցել են հորիզոնական ինտեգրման:

Մասնավորապես՝ «Mitsubishi» ընկերությունը հիմնադրվել է 1870-ական թվականներին: Հիմնադիրն է Իվասակի Յատարոն, ով սամուրայական կլաններից մեկի ներկայացուցիչ էր: 1915 թվականին վերջինս, հաշվի առնելով իր շահերը խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, օժանդակում է Անտանտին՝ հույս ունենալով ստանալ գերմանական գաղութները: «Միցուբիշի»-ն այդ ժամանակահատվածում զբաղվում էր նավագործությամբ և ծանր արդյունաբերությամբ, ինչն էլ հնարավորություն տվեց զարգանալու՝ ի հաշիվ ընթացող պատերազմի: 1916 թվականին «Միցուբիշի» ընկերության ղեկավարությունն անցավ Կոյատա Իվասակիին, ով առաջադեմ գաղափարների տեր անձնավորություն էր: Նրան մասնավորապես հետաքրքրում էր բարձր տեխնոլոգիաների ոլորտը, այդ թվում՝ մեքենաշինությունն ու ավիացիան:

Երկրորդ համաշխարհայինը նույնպես իր ազդեցությունն ունեցավ ընկերության պատմության վրա: Այն զբաղվում էր տանկերի, օդանավերի և այլ ռազմական տեխնիկայի մատակարարմամբ և լայն հնարավորություն ուներ օգտվելու գրավված տարածքների ռեսուրսներից: Այդուհանդերձ, ճապոնիայի պարտությունից հետո «Միցուբիշի»-ն մասնատվեց: Դա տեղի ունեցավ բաժնեմասերի վաճառքի միջոցով: Մինևույն ժամանակ վերջ տրվեց նաև նախկին միավորումներին՝ դայբեցուներին:

Արդեն 1950-1960-ական թվականներին երկրի տնտեսությունը կարողացավ անցում կատարել նախկին


համակարգից նորին: ԱՄՆ վարած քաղաքականության արդյունքում նախկին հոլդինգային միավորումների ձևավորումն արգելվում էր, ինչը ստիպեց ստեղծել նոր տեսակի միավորումներ՝ կեյռեցուներ: Թերևս «Միցուբիշի»-ի օրինակը առավել ներկայացուցչական է ընդհանուր տնտեսության զարգացման ֆոնին և ներկայացնում է անցումը նախկին կենտրոնացված համակարգից նոր ինտեգրված համակարգին:

Ազդեցությունը տնտեսության վրա

Նոր ձևավորված կեյռեցուների գործունեությունը ոչ միայն դրական ազդեցություն ունի երկրի ներքին տնտեսական վիճակի համար [i], այլև արտահանման ծավալների և արտաքին առևտրի զարգացման գործում:

Ճապոնիան 2016 թվականին արտահանել է 645.2 մլրդ դոլարի ապրանք, ինչը 11.1%-ով ավելի է, քան 2009 թվականի ճգնաժամից հետո գրանցված ցուցանիշները, իսկ 2015-2016 թվականների համեմատությամբ արտահանումն աճել է 3.2%-ով: Ճապոնական 10 խոշոր արտահանող կազմակերպությունների բաժինը միջազգային բեռնափոխադրումներում կազմում է 77.6% [ii]:

2016 թ. արտահանման ծավալները ըստ ոլորտների (մլրդ դոլար)



- Տրանսպորտային միջոցներ (28%)
- Սարքավորումներ, ներառյալ համակարգիչներ (25%)
- Էլեկտրական սարքավորումներ (20%)
- Օպտիկական, բժշկական սարքավորումներ (7%)
- Երկաթ, պողպատ (5%)
- Պլաստմասսե իրեր (5%)
- Օրգանական քիմիական նյութեր (3%)

Ճապոնական 11 խոշոր արտահանող կազմակերպություններն են՝

1. Toyota Motor
2. Japan Tobacco
3. Denso
4. Takeda
5. Hitachi
6. Canon
7. Fanus
8. Panasonic

9. Nippon Steel
10. Mitsubishi Electric
11. Astellas Pharma

Կեյմեցուների ղեկավարումը հիմնականում իրականացվում է «Ներսի մարդկանց»՝ ինսայդերների կողմից: Բաժնային կապիտալի զգալի մասը (շուրջ 70%) պատկանում է Ներքին ներդրողներին: Կեյմեցուն բնութագրվում է նաև խմբի ներսում բարձր շարժունակությամբ՝ պայմանավորված ինչպես ներքին ապրանքաշրջանառությամբ, այնպես էլ խմբի անդամների միջև ներքին կադրային հոսքերով: Վերջինիս շնորհիվ ապահովվում է փորձի արդյունավետ փոխանակում:

Կեյմեցուների կառավարման գործում մեծ նշանակություն ունեն հատկապես բանկերը՝ որպես կեյմեցուների «միջուկ»: Կորպորացիաների 16%-ի դեպքում խոշորագույն բաժնետերը բանկն է, իսկ կորպորացիաների 22%-ի համար այն երկրորդ խոշոր բաժնետերն է: Առանցքային նշանակություն ունեցող բանկը սովորաբար նախապատրաստում և իրականացնում է խոշոր ներդրումային նախագծեր սեփական խմբի ներսում, մինչդեռ, օրինակ, ԱՄՆ մոդելի պարագայում խոշոր սեփականատեր բանկերը խուսափում են ուղղակի ներդրումներից այն ընկերություններում, որոնց սեփականատերն են: Բանկերի դերը ի հայտ է գալիս նաև ճգնաժամային իրավիճակներում, երբ նրանք ժամանակավորապես՝ մինչև իրավիճակի բարելավումը, կառավարչական գործառույթներ են իրականացնում: Խնդիրների լուծման արդյունավետությանը նպաստում է նաև որոշ դեպքերում որոշումների կայացման ոչ ֆորմալ ձևաչափը: Տնօրենների խորհուրդը առաջնային խնդիրները քննարկում է այսպես կոչված «տնօրենների ակումբում», որը ազատում է կազմակերպությանը որոշ ֆորմալ ընթացակարգերից [liii]:

Բանկային համակարգերից գատ՝ կեյմեցուների ներսում գործում են այլ ինստիտուցիոնալ միավորներ ևս, ինչպիսիք են ապահովագրական ընկերությունները և այլ ֆինանսական կազմակերպություններ: Կեյմեցուների ձևավորման առաջնային փուլում (1970-ական թթ.) վերոնշյալ ֆինանսական կառույցներին էր պատկանում համախառն բաժնային կապիտալի

35%-ը, իսկ 1993 թվականին՝ արդեն 42%-ը [iv]: 2006 թվականին այս ցուցանիշն արդեն մոտենում է 50%-ին [v]: Ներկայումս բաժնային կապիտալի բաշխումը այն է, ինչն արտացոլված է Տոկիոյի ֆոնդային բորսայում ցուցակված կազմակերպությունների բաժնետոմսերի կառուցվածքում [vi]:

Ֆինանսական տեսանկյունից ճապոնական մոդելը բնութագրվում է նաև երկարաժամկետ կայունությամբ՝ ի հաշիվ կարճաժամկետ շահութաբերության մակարդակի: Շահութաբերության մակարդակը որոշակի մասով զոհաբերվում է՝ դրա փոխարեն ստանալով կայուն շահութաբերություն երկարաժամկետ կտրվածքով, ինչպես նաև այլ՝ ոչ ֆինանսական օգուտներ խմբի անդամների հետ համագործակցությունից: Փաստացի 1980-ական թվականներին այս սկզբունքի կիրառման արդյունքում ճապոնական կորպորացիաների շահույթի մակարդակը ցածր էր ամերիկյան նմանատիպ կորպորացիաների համեմատ, սակայն դրա փոխարեն շահութաբերության ներճյուղային մակարդակը չէր տատանվում:

Ամերիկյան մոդելի պարագայում շահաբաժնային քաղաքականությունը՝ շահաբաժինների բաշխումը սեփականատերերի միջև, կարևոր ցուցանիշ է կազմակերպության ընդհանուր գործունեության մասին պատկերացում կազմելու համար: Այս պարագայում կորպորացիաների սեփականատերերի զգալի մասը անհատական ներդրողներն են, որոնք հետևում են բաժնետոմսերի գների և կայացում են բաժնետոմսի գնման կամ վաճառքի մասին որոշում: Ճապոնական մոդելի պարագայում հիմնական սեփականատերերը կազմակերպություններն են, որոնց ձեռնտու չէ շահաբաժինների բաշխումը, քանի որ գործում է խաչաձև տիրապետման սկզբունքը, և մի խմբի կողմից դիվիդենտները վճարելու պահանջին կիստևի նմանատիպ պահանջ մյուս խմբի կողմից: Դիվիդենտների բաշխման փոխարեն այդ միջոցները օգտագործվում են կապիտալի ընդլայնման և կազմակերպության հեռանկարային զարգացման համար:

Կառավարման տեսանկյունից ճապոնական մոդելի դեպքում թույլ կապ է ստեղծվում կազմակերպության շուկայական արժեքի և ղեկավարության բարձր

մակարդակի նյութական շահադրժման միջև, այն է՝ բարձր մակարդակի մենեջերների համար չի գործում պարզևսկզմարներով շահադրժման համակարգ: Դիվիդենտների նվազման դեպքում կազմակերպության ղեկավարներին դադարում են վճարել բոնուսներ, մինչդեռ դիվիդենտների ավելացումը ոչ մի հետևանք չի ունենում ղեկավարների բոնուսային համակարգի վրա:

Ուշագրավ են նաև մարդկային ռեսուրսների կառավարման սկզբունքները: Աշխատանքային պայմանագրերի ճշող մեծամասնությունը երկարաժամկետ է և ենթադրում է կայունություն ու հավատարմություն: Արդյունքում պայմանագրային աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ունենում կազմակերպության կառավարմանը և հաճախ իրենց նույնացնում են կազմակերպության հետ:

Համաշխարհային ներգրավվածության տեսանկյունից օտարերկրյա ուղղակի ներդրումները կեյնեցուներում ընդամենը 5% [vii] են կազմում ընդհանուր կապիտալի մեջ: Փաստացի ճապոնական տնտեսությունն ունի կապիտալի բարձր շարժունակություն տնտեսության ներսում հորիզոնական բարձր ինտեգրման շնորհիվ, սակայն միևնույն ժամանակ փակ է արտաքին ներդրումների համար: Կարող է թյուր տպավորություն ստեղծվել, որ ճապոնական մոդելի պարագայում կազմակերպությունները գործում են լճացած միջավայրում, սակայն կարճաժամկետում կտրուկ փոփոխությունների բացակայությունը հնարավորություն է տալիս երկարաժամկետ կայուն հեռանկարներ ստեղծելու ինչպես առանձին կազմակերպությունների և խմբերի, այնպես էլ ընդհանուր տնտեսության համար:

Այսպիսով՝ կարելի է ամփոփել կորպորատիվ կառավարման ճապոնական մոդելի դրական և բացասական կողմերը.

Դրական ազդեցություն

1. Ներքին շուկայի բարձր ինտեգրացիա:
2. Մասնակիցների միջև տեղեկատվության և փորձի արագ փոխանակում:
3. Տնտեսության ներսում կապիտալի բարձր հոսունություն:

4. Ծուկայական տատանումների ռիսկի մեղմացում փոխկապվածության շնորհիվ:
5. Աշխատակիցների ոչ նյութական շահադրժում և կայուն հեռանկարների ապահովում:

Բացասական ազդեցություն

1. Արագ աճի հնարավորության բացակայություն:
2. Օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակ:
3. Հասարակության առանձին անդամների ցածր ներգրավվածություն կազմակերպության կառավարմանը:

Արդյունքում՝ ճապոնական մոդելի հիմնական թերությունները կրկնում են այն հիմնական կողմերը, որոնք բնորոշ են կորպորատիվ կառավարման ամերիկյան մոդելին: Այդուհանդերձ, կորպորատիվ կառավարման մոդելները միանշանակ չեն, և կարևոր են ոչ թե դրանց սկզբունքները որպես այդպիսին, այլ այդ սկզբունքների արդյունավետ կիրառումը գործնականում, ինչի վառ օրինակ են ճապոնիան և ԱՄՆ-ը: Երկու պետություններն էլ խոշոր զարգացած տնտեսություններ են ձևավորել՝ ճիշտ ռազմավարություն ընտրելով նաև կորպորատիվ կառավարման շրջանակներում:

Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել Հայաստանի տնտեսության և ճապոնական մոդելի կիրառման միջև, ապա դժվար կլինի պատկերացնել Հայաստանի տնտեսությունը ճապոնական մոդելով գործելիս: Պատճառը, թերևս, Հայաստանի կազմակերպությունների փակ կորպորատիվ մշակույթն է, ինչն անհնար է դարձնում ճապոնական ինտեգրման սկզբունքի կիրառումը: Սրա մասին վկայում է այն, որ մեր տնտեսության մեջ գործում են ավելի շատ փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ գործող ընկերություններ, ինչը սահմանափակում է կապիտալի շարժը կազմակերպությունների միջև: Գործող խոշոր կազմակերպություններն ունեն ուղղահայաց կենտրոնացվածություն, ինչն անհնար է դարձնում տարբեր ոլորտներում գործող կազմակերպությունների իրական ինտեգրումը ճապոնական տարբերակով:

Հայաստանի տնտեսությունը, ի լրումն ներքին առանձնահատկությունների, չի կարող իրեն թույլ

տալ հրաժարվել արտաքին ներդրումներից ու աջակցությունից, ինչն առանցքային նշանակություն ունի ինքնուրույն տնտեսություն ձևավորելու և արտահանման ծավալները ավելացնելու համար:

Հղումներ

[i] ԱՄՆ վիճակագրական տվյալների համաձայն Ճապոնիայի ՀՆԱ-ն 2016 թ. կազմել է 4,932 տրիլն դոլար, իսկ 126,7 մլն բնակչության պարագայում յուրաքանչյուր բնակչին բաժին է հասնում մոտ 38,900 դոլար:

[ii] Japan's Top 10 Exports by Daniel Workman

<http://www.worldstopexports.com/japans-top-10-exports/>

[iii] «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.

[iv] «Особенности формирования национальной модели корпоративного управления», Радыгин А.Д. М 2003, стр. 10

[v] "Ownership Structure and Corporate Governance": Hideaki Miyajima Policy Research Institute, Ministry of Finance, Japan, Public Policy Review, Vol. 11, No.3, July 2015, page 370. https://www.mof.go.jp/english/pri/publication/pp_review/ppr029/ppr029a.pdf

[vi] "OECD corporate governance factbook" 2017

<https://www.oecd.org/daf/ca/Corporate-Governance-Factbook.pdf>

[vii] «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.

Գրականություն

1. «Կորպորատիվ հարաբերությունների Ամերիկյան, Եվրոպական և Ճապոնական մոդելների գաղափարական առանձնահատկությունները», Ռուբեն Մելքոնյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոն, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», Սեպտեմբեր 2004/43
2. «Կորպորատիվ կառավարման Անգլո-Ամերիկյան,

Գերմանա-Ճապոնական և Հայկական մոդելների համեմատական

3. վերլուծություն», Ռուբեն Մելքոնյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոն, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», Սեպտեմբեր 2004/47

4. «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.

5. «Особенности формирования национальной модели корпоративного управления», Радыгин А.Д. М 2003.

Japanese Model of Corporate Governance

Hakob Hakobyan | September 28, 2017
Translator | Armine Tatoyan

Nowadays, the most popular and widespread models of corporate governance are Anglo-American, European (continental), and Japanese. The Japanese model radically differs from the first two, which is based on the principles of reciprocal shareholding, the formation of large associations with diverse participants, and the subordination of dividends. Before the current stage of development, there was a feudal system in Japan, where large samurai families controlled most of the economy. In the late 19th century, vast financial and industrial groups, known as zaibatsus, were formed, which were vertically integrated business conglomerates run by multiple families.

The aforementioned system of government could not last long, especially in the conditions of Japan's devastated economy after World War II, since that system limited economic development due to its centralized nature. As a result of economic reforms, the former vertically centralized system was replaced by a horizontally integrated system, the structural unit of which became the keiretsu (literally a system, a grouping of enterprises). As a consequence, the current Japanese economy is characterized by a high level of horizontal centralization, interrelation of different fields through financial-industrial groups, keiretsus, and an established culture of corporate governance.

Currently, there are seven main keiretsus:

- Mitsui
- Sumitomo
- Dai-Ichi Kangyo
- Mitsubishi
- Industrial Bank of Japan
- Fuyo
- Tokai

Almost all keiretsus are based on pre-existing incorporations, which have evolved from vertical centralization to horizontal integration.

In particular, the Mitsubishi Corporation was founded in the 1870s. The founder is considered to be Iwasaki Yataro, who was a representative of one of the samurai clans. Taking into account his interests in the Pacific region, the latter supported the Entente in 1915, hoping to get the German colonies. Mitsubishi was then engaged in shipping and heavy industry, which promoted its development through the ongoing war. In 1916, the leadership of the Mitsubishi Corporation passed to Koyata Iwasaki, a man with progressive ideas. He was especially interested in high technologies, including mechanical engineering and aviation.

World War II also influenced the history of the corporation. It was engaged in the supply of tanks, aircraft, and other military equipment and had ample opportunity to use the resources of the occupied territories. However, after the defeat of Japan, Mitsubishi split. The division took place through the sale of shares, at the same time putting an end to the previous incorporations, the zaibatsus.


Already in the 1950s and 1960s, the country's economy was able to make a transition from the former system. As a result of the US policy, the formation of the previous holding companies was banned, which led to the creation of a new set of companies - keiretsus. The example of Mitsubishi is more representative against the background of the development of the general economy and represents the transition from the former centralized system to the new integrated one.

Impact on the Economy

The activities of the newly formed keiretsus have a positive impact not only on the country's internal economic situation [i], but also on the development of exports and foreign trade.

In 2016, Japan exported goods worth of \$ 645.2 billion, which is 11.1% more than the figures recorded after the 2009 crisis; exports increased by 3.2%, compared to 2015/2016. The share of 10 major Japanese exporting companies in international cargo transportation is 77.6% [ii].

Exports in 2016 by sectors (billion dollars)



- Modes of transport (28%)
- Equipments, including computers (25%)
- Electrical equipments (20%)
- Optical, medical equipments (7%)
- Iron, steel (5%)
- Plastic items (5%)
- Organic chemicals (3%)

Top 11 Japanese Export Companies:

1. Toyota Motor
2. Japan Tobacco
3. Denso
4. Takeda
5. Hitachi
6. Canon
7. Fanus
8. Panasonic
9. Nippon Steel
10. Mitsubishi Electric
11. Astellas Pharma

The keiretsus are mainly run by "inner circles" - the insiders. Most of the share capital (about 70%) belongs to domestic investors. Keiretsu is also characterized by high mobility within the group due to both domestic turnover and internal staff flows among group members. The latter ensures an effective exchange of experience.

Banks, as a "core" of keiretsus, play a particularly pivotal role in their management. The bank is the largest shareholder in 16% of corporations and the second-largest shareholder in 22%. The core bank usually prepares and implements large investment projects within its group, while in the US model, for example, large owner banks avoid direct investments in the companies they own. The role of banks also emerges in crises, when it temporarily performs management functions until the situation improves. In some cases, informal decision-making also contributes to the effectiveness of problem-solving. The board of directors discusses the priority issues in the so-called "club of directors", which relieves the organization of some formal procedures [iii].

In addition to the involvement of the banking system, other institutional units, such as insurance companies and other financial organizations, also operate within keiretsus. At the earliest stage of the establishment of keiretsus (1970), the aforementioned financial organizations owned 35% of the gross share capital, in 1993 - already 42% [iv], and in 2006 this figure reached 50% [v]. The distribution of share capital is currently the same as in the structure of shares of companies listed on the Tokyo Stock Exchange [vi].

From a financial point of view, the Japanese model is also characterized by long-term stability to the detriment of the level of short-term profitability. To some extent, the level of profitability is sacrificed, instead of it receiving stable profitability in the long run, as well as other, non-financial benefits from working with group members. As a result of the application of this principle in the 1980s, Japanese corporations had lower corporate profits than similar American corporations, instead, the intra-branch profitability did not fluctuate.

In the American model, dividend policy - distribution of dividends within shareholders - is an essential indicator for

forming an opinion about the general activities of the organization. In this case, the vast majority of corporations' owners are individual investors who follow up on prices of shares and make a decision whether to buy or sell shares.

In the Japanese model, the chief owners are organizations that do not benefit from the distribution of dividends because the principle of cross holding is applied; a statement by one group to pay dividends will be followed by a similar demand from another group. Instead of distributing dividends, these funds are used for capital expansion and perspective development of the organization. From a management point of view, the Japanese model creates a weak connection between the market value of the organization and the high-level material motivation of leadership, i.e., the bonus incentive system does not work for high-level managers. In case of a decrease in dividends, bonuses are no longer paid to the directors of the organization; however, an increase in dividends does not affect the bonus system for directors.

The principles of human resource management are also noteworthy. The vast majority of employment contracts are long-term and imply stability and loyalty. As a result, contractors are actively involved in the process of running the organization, often identifying themselves with the organization. In terms of global engagement, foreign direct investments in keiretsus make up only 5% of the total capital[vii].

Actually, the Japanese economy has high capital mobility within the economy due to its high horizontal integration, but at the same time, it is closed to foreign investments. There may be a misconception that in the Japanese model, organizations operate in a stagnant environment. However, the absence of radical change in the short run enables the creation of long-term sustainable prospects for both individual groups and the overall economy. Thus, the pros and cons of the Japanese model of corporate governance can be summarized:

Positive Impact

- High integration of the internal market.
- Rapid exchange of information and experience between participants.

- High capital flow within the economy.
- Mitigation of the risk of market fluctuations due to interconnectedness.
- The intangible motivation of employees and insurance of sustainable prospects.

Negative Impact

- Lack of opportunity for rapid growth.
- Low level of foreign investments.
- Low involvement of individuals in the management of the organization.

As a result, the main disadvantages of the Japanese model repeat the main aspects typical to the American model of corporate governance. However, corporate governance models are not definite; it is not their principles that are important, but the productive application of these principles in practice, vivid examples of which are Japan and the USA. Both countries have developed large economies, including the right strategy within corporate governance.

Drawing parallels between the Armenian economy and the application of the Japanese model, it is hard to imagine the Armenian economy operating under the Japanese model. The reason, perhaps, is the closed corporate culture of Armenian organizations, which makes the application of the principle of Japanese integration impossible. It is evidenced by the fact that there are more closed joint-stock and limited liability companies within our economy, restricting the flow of capital between organizations. The existing large organizations have a vertical centralization, which makes it impossible for the real integration of organizations operating in different spheres through the Japanese model.

The Armenian economy, in addition to domestic peculiarities, cannot afford to refuse foreign investment and contribution, which is the key to building an independent economy and increasing exports.

References

[i] According to IMF statistics, Japan's GDP in 2016 was \$ 4.932 trillion, and in the case of a population of 126.7

million, each resident has about \$ 38,900.

[ii] Japan's Top 10 Exports by Daniel Workman

<http://www.worldstopexports.com/japans-top-10-exports/>

[iii] «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.

[iv] «Особенности формирования национальной модели корпоративного управления», Радыгин А.Д. М 2003, стр. 10.

[v] "Ownership Structure and Corporate Governance": Hideaki Miyajima Policy Research Institute, Ministry of Finance, Japan, Public Policy Review, Vol. 11, No.3, July 2015, page 370. https://www.mof.go.jp/english/pri/publication/pp_review/ppr029/ppr029a.pdf

[vi] "OECD corporate governance factbook" 2017

<https://www.oecd.org/daf/ca/Corporate-Governance-Factbook.pdf>

[vii] «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.

Bibliography

1. «Կորպորատիվ հարաբերությունների Ամերիկյան, Եվրոպական և Ճապոնական մոդելների գաղափարական առանձնահատկությունները», Ռուբեն Մելքոնյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոն, «Հայաստան. ֆինանսներ և Էկոնոմիկա», Սեպտեմբեր 2004/43
2. «Կորպորատիվ կառավարման Անգլո-Ամերիկյան, Գերմանա-Ճապոնական և Հայկական մոդելների համեմատական վերլուծություն», Ռուբեն Մելքոնյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոն «Հայաստան. ֆինանսներ և Էկոնոմիկա», Սեպտեմբեր 2004/47
3. «Сравнительный анализ моделей корпоративного управления», Е.С. Силова Вестник Челябинского государственного университета. 2011. № 32 Экономика. Вып. 34.
4. «Особенности формирования национальной модели корпоративного управления», Радыгин А.Д. М 2003

Կրիպտոարժույթ. Դուք դրան բիթքոյն եք ասում

Լիլիթ Օվսյան և Յակոբ Յակոբյան | Դեկտեմբեր 5, 2017

Վերջին ժամանակներս հաճախ ենք հանդիպում «կրիպտոարժույթ», «բիթքոյն» տերմիններին: Շարունակվում են բուռն քննարկումները կրիպտոարժույթների տարածման, գնի փոփոխության վերաբերյալ:

Ի վերջո՞ ի՞նչ է կրիպտոարժույթը, ինչպե՞ս է այն ստեղծվում:

Կրիպտոարժույթը վճարային միջոց է, որի հաշվառումն ապակենտրոնացված է: Այն գաղտնագրված տեղեկությունն է, որը հնարավոր չէ կրկնօրինակել (այդ պատճառով էլ անվան մեջ օգտագործվել է «կրիպտո» տերմինը): «Կրիպտոարժույթ» տերմինը շրջանառության մեջ է մտել բիթքոյնի՝ վիրտուալ արժույթի և վճարային համակարգի մասին պատմող հոդվածից հետո: Կոնցեպտը ներկայացրել է Սատոշի Նակամոտոն: Մինչ այժմ նրա ինքնությունը հստակ պարզված չէ:

Յավանաբար Սատոշի Նակամոտոն անհատ է կամ մարդկանց խումբ, որ հանդես է գալիս այս կեղծանվամբ: Նակամոտոն գաղափարը առաջ է քաշել 2008 թ. հոկտեմբերի 31-ին, իսկ տարածվել սկսվեց 2009թ.-ից: Նախագծի ստեղծումից մեկ տարի անց Նակամոտոն լքեց այն և իր լիազորությունները փոխանցեց Գևին Անդերսենին:

Բիթքոյնը շրջանառության մեջ մտավ ընդամենը 1 դուլար արժեքով, բայց կարճ ժամանակ անց սահմանեց ռեկորդային արժեք՝ անցնելով 5 հազար դուլարի սահմանը: Կրիպտոարժույթների հիմքում ընկած է blockchain (բլոկ-շղթա) տեխնոլոգիան:

Բլոկ-շղթան ապակենտրոնացված, թվայնացված, բաց հասանելիություն ունեցող (հանրային) գրանցամատյան է, որտեղ գրանցվում են կրիպտոարժույթով իրականացված բոլոր գործարքները[i]: Մատյանում կատարված՝ գործարքների մասին գրառումները անընդհատ ավելանում են ժամանակագրական կարգով,

ինչը հնարավորություն է տալիս մասնակիցներին գործարքների իրականացմանը հետևել առանց կենտրոնացված գրանցման, քանի որ յուրաքանչյուր մասնակից ստանում է ավտոմատ բեռնվող բլոկ-շղթայի պատճենը:

Ներկայումս այս տեխնոլոգիան հիմնականում կիրառվում է կրիպտոարժույթներով կատարվող գործարքներին հետևելու և դրանց ստուգման համար, ինչն իրականացվում է, այսպես կոչված, ապակենտրոնացված հաշվառման տեխնոլոգիայով (distributed ledger technology՝ DLT): Միևնույն ժամանակ հնարավոր է կողավորել և բլոկ-շղթայի մեջ ներառել ցանկացած տեսակի փաստաթուղթ: Ներբեռնված միավորում հնարավոր չէ փոփոխություններ կատարել, իսկ դրա իսկությունը կարող են ստուգել շղթայի բոլոր մասնակիցները՝ կենտրոնացված գրանցման համակարգի փոխարեն օգտագործելով բլոկ-շղթան:

Բլոկը բլոկ-շղթայի ընթացիկ մասն է, որը գրանցում է վերջին բոլոր գործարքները (կամ որոշները): Բլոկի գրանցման գործընթացն ավարտելուց հետո բլոկը միանում է շղթային, որը տվյալների գրանցման մշտական բազա է: Յուրաքանչյուր բլոկի ավարտվելուն պես ստեղծվում է նորը, որը ժամանակագրական կարգով կապված է բլոկ-շղթայի հետ: Յուրաքանչյուր բլոկ պարունակում է նախորդի հաշը (hash՝ 256 բիթանոց կրիպտոգրաֆիկ ֆունկցիա [ii]): Արդյունքում բլոկ-շղթան ներառում է օգտագործողների տվյալները և նրանց կատարած գործարքների մասին տեղեկատվությունը սկզբնական բլոկից մինչև վերջին ստեղծվածը:

Բլոկ-շղթան կազմված է այնպես, որ գրանցված տվյալները հնարավոր չէ փոփոխել և տեղեկատվությունը ոչ թե պատճենվում, այլ բաշխվում է շղթայի մեջ:


Այսպիսով՝ բլոկ-շղթայի տեխնոլոգիայի մեջ ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները [iii].

- **Բաշխված շղթա**
Յուրաքանչյուր օգտատեր ունի տվյալների հասանելիություն:

- **Միակարգ (P2P) գործարքներ**
Գործարքները կատարվում են նույն մակարդակի մասնակիցների միջև, առանց կենտրոնացված համակարգի:
- **Թափանցիկություն՝ կեղծանուն ունենալու հնարավորությամբ**
Գործարքները հասանելի են յուրաքանչյուր մասնակցի համար, և յուրաքանչյուրն ունի 30 և ավելի սիշով կեղծանուն:
- **Գրանցված տվյալների չեղարկման անհնարինություն**
Ստեղծման պահից գրանցվածը փոփոխման ենթակա չէ:
- **Հաշվարկային տրամաբանություն**
Մասնակիցները կարող են կազմել գործողությունների ալգորիթմներ, որոնք ավտոմատ կկատարեն գործարքներ:

Գործարքների նկարագրություն

Սատոշի Նակամոտոն իր հոդվածում էլեկտրոնային արժույթը կամ մետաղադրամը սահմանում է որպես թվային ստորագրությունների շղթա [iv]: Յուրաքանչյուր օգտագործող ավելացնում է կատարում շղթային նախորդ գործարքի կողավորման ֆունկցիայի (հաշ ֆունկցիա) միջոցով և ավելացնում է հաջորդ օգտագործողի հրապարակային բանալին՝ կցելով շղթայի վերջին: Գործարքի ստացողը կարող է ստուգել էլեկտրոնային ստորագրությունները գործարքի մասնակիցներին նույնականացնելու համար [v]:



Բլոկ-շղթայի միջոցով ստեղծված կրիպտոարժույթը պահպանվում է հատուկ էլեկտրոնային դրամապանակներում: Արժույթ ստանալու ընթացքը կոչվում է մայնինգ: Գործընթացը հասանելի է բոլորին: Ցանկացած մարդ կարող է կրիպտոարժույթ որոնել: Անհրաժեշտ է միայն համակարգչի վրա հատուկ ծրագրային ապահովում տեղադրել:

Կրիպտոարժույթները լայնորեն կիրառելու դեպքում կարող են էական փոփոխություններ լինել ֆինանսական համակարգում: Այս նորարարության կիրառման շնորհիվ բավականին կհեշտանան փոխանցումները, կնվազեցվեն վճարները, ինչպես նաև կկրճատվի նրանց վրա ծախսվող ժամանակը: Չնայած Եվգենի Կասպերսկին կարծում է, որ կրիպտոարժույթները լավ կաշխատեն միայն 300 տարի անց [vi]:

Կրիպտոարժույթների առավելություններից մեկը, ինչպես նշվեց, փոխանցման ցածր վճարն է: Տվյալ փոխանցումները ենթադրում են բավական ցածր վճարներ՝ կազմելով փոխանցվող գումարի 0-1%-ը: Համեմատության համար նշենք, որ առցանց վճարային համակարգերի դեպքում վերոհիշյալ վճարը կազմում է փոխանցվող գումարի 2-4%-ը, իսկ գումար փոխանցող ընկերությունների ծառայություններից օգտվելու դեպքում՝ 8-9%:

Վիրտուալ արժույթների փոխանցումներն ավելի արագ են կատարվում, քան իրականը: Բիթքոյնների դեպքում գործարքը կարող է տևել 10-60 րոպե: Նշենք նաև, որ կրիպտոարժույթներով վճարումները կատարվում են շուրջօրյա՝ առանց ժամանակային սահմանափակման:

Առավելություններից մեկն էլ ինֆլյացիայի վերահսկելի ռիսկն է: Ի տարբերություն կրիպտոարժույթների՝ իրական արժույթների վրա կառավարությունները, ԿԲ-ները ունեն զգալի ազդեցություն և կարող են ազդել փողի առաջարկին: Վիրտուալ արժույթի դեպքում ինֆլյացիա կարող է առաջանալ հաստատուն առաջարկի պայմաններում՝ պահանջարկի նվազման կամ առաջարկվող բիթքոյնի առաջարկի մեծացման որոշ դեպքերում:

Թերևս ամենամեծ առավելություններից է այն հանգամանքը, որ գործարքները չեն պահանջում անձնական տվյալների տրամադրում: Բիթքոյնի օգտատերն իր փողը կարող է պաշտպանել ծածկագրման միջոցով: Ի տարբերություն այլ վճարային միջոցների՝ բացառվում է առևտրականների աննկատ գումար գանձելը:

Թերություններ.

1. Չները կարող են կտրուկ փոփոխվել, իսկ այդ փոփոխությունները կանխատեսել հնարավոր չէ:

	2017թ. հունվարից հոկտեմբեր	Վերջին 12 ամիսների ընթացքում	Տարեկան միջին փոփոխություն 2013թ.-ից
Բիթքոյն	+495%	+717%	+1010%
Էթերիում	+4169%	+3016%	+2080%
S&P 500	+14%	+20%	+13%
Ոսկի	+13.5%	+11.5%	+4%

Կրիպտոարժույթների գների փոփոխությունը՝ ամերիկյան S&P 500 ֆոնդային ինդեքսի և ոսկու գների փոփոխության համեմատ [vii] [viii]:



2. Զանի որ վերահսկողությունը բացակայում է, կրիպտոարժույթները կարող են օգտագործվել հանցավոր գործունեության համար՝ փողերի լվացում, հարկերից խուսափում, Փոնգի սխեմայի պես խարդախություններ: Փոնգի սխեման ներդրումային խարդախության տեսակ է, երբ ներդրողներին խոստանում են բարձր շահույթ՝ ցածր ռիսկի պայմաններում, իսկ վերահսկողության բացակայության պայմաններում շատերը կարող են «ծուղակն» ընկնել:
3. Կա հարկերը շրջանցելու մեծ հավանականություն:
4. Բիթքոյնի համատարած օգտագործումը կհանգեցնի նրան, որ պահանջարկը կգերազանցի առաջարկին, ինչի հետևանքով դա կայունորեն կմեծանա: Ապրանքների և ծառայությունների գները կնվազեն, իսկ առաջացած գնանկումն իր հերթին բացասական ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա:
5. Ինչպես ցանկացած արժույթ, կրիպտոարժույթը ևս գրավիչ է գողերի համար: Դեպքեր, թեև քիչ, բայց ամեն դեպքում գրանցվել են: 2011թ.-ին օգտատերերից մեկը հայտարարեց, որ իր «դրամապանակից» գողացել են 25.000 բիթքոյն: Իսկ 2012թ.-ին հայտնի դարձավ, որ «Webhost» ընկերությունից հափշտակվել է 50.000 բիթքոյն՝ մոտ 230 հազար ԱՄՆ դոլար:

ՀՀ-ում Կենտրոնական բանկը հորդորում է ձեռնպահ մնալ կրիպտոարժույթների օգտագործումից՝ նախքան համապատասխան կարգավորումների ներդրումը [ix]:

ՌԴ-ում աշխատում են վերահսկողության կոնկրետ մեխանիզմներ ներդնելու վրա: ՌԴ նախագահը նշում է, որ երկրում վերահսկելու կոնկրետ մեխանիզմների ստեղծումն անհրաժեշտ է հարկերից խուսափումը, կեղտոտ փողերի լվացումը, ահաբեկչության ու խարդախության ֆինանսավորումը նվազագույնի հասցնելու համար: Սա լուրջ վտանգ է վերահսկողության բացակայության պայմաններում:

Արժույթի միջազգային հիմնադրամի նախկին գլխավոր տնտեսագետ Քեննեթ Ռոզոֆը կանխատեսում է բիթքոյնի տապալում մոտ ապագայում:

Եվրոպական Կենտրոնական բանկի նախագահ Մարիո Դրագին հայտարարել է, որ եվրագոտում միայն մեկ արժույթ կարող է շրջանառվել, իսկ եվրագոտու երկրները չեն կարող թողարկել ազգային արժույթներ [x]:

Իսկ ճապոնիայում, օրինակ, բիթքոյնը և մնացած կրիպտոարժույթները պաշտոնապես վճարման միջոց են համարվում: Նշենք, որ վիրտուալ արժույթները, այդ թվում՝ բիթքոյնը, Հայաստանում էլեկտրոնային գումար չեն համարվում:

Չնայած բարձրացված աղմուկին՝ կրիպտոարժույթն ունի բազմաթիվ առավելություններ, որոնք կարելի է օգտագործել տնտեսության, բիզնեսի զարգացման համար: Հայաստանում, իհարկե, դեռ վաղ է բիթքոյնի տարածման մասին խոսելը: Սակայն, ինչպես մնացած երկրներում, մեզանում ևս բիթքոյնի կիրառումը կնպաստի տնտեսական աճին: Եական վտանգ են վերահսկողության բացակայությունն ու կասկածելի գործարքները: Օգտատերերին ռիսկերից ապահովագրելու լավագույն միջոցը գիտելիքների դերի բարձրացումն ու տեղեկատվական ասիմետրիայի վերացումն է: Եթե գործարքի ժամանակ մի կողմը մյուսից ավելի է տեղեկացված, ապա կա խաբեության մեծ հավանականություն, իսկ համապատասխան ինֆորմացիայի տիրապետումը կկանխի վճարային միջոցների կորուստը:

Հղումներ

- [i] Blockchain Explained <http://www.investopedia.com/terms/b/blockchain.asp>
- [ii] But how does bitcoin actually work? <https://www.youtube.com/watch?v=bBC-nXj3Ng4>
- [iii] The Truth About Blockchain <https://hbr.org/2017/01/the-truth-about-blockchain>
- [iv] "Bitcoin: A Peer-to-Peer Electronic Cash System" Satoshi Nakamoto 2008
- [v] Կետագիծ՝ նույնականացում, ընդհատ գիծ՝ ստորագրություն, հոծ գիծ՝ կողավորում (հաշվավորում)
- [vi] Կասպերսկի. Աշխարհը կրիպտոարժույթին պատրաստ կլինի 300 տարի հետո: <http://www.banks.am/am/news/fintech/14499>
- [vii] Market Price <https://blockchain.info/charts/market-price?timespan=1year>
- [viii] Market Price <https://blockchain.info/charts/market-price?timespan=all>
- [ix] Ի՞նչ է կրիպտոարժույթը, և որտեղ են ռիսկերը <http://newsarmenia.am/am/news/dramapanak/-inch-kriptoarjuty-ev-vortex-en-riskery/>
- [x] Մարիո Դրագին դեմ է Եստոնական կրիպտոարժույթի թողարկմանը: <http://www.banks.am/am/news/fintech/14382>

Գրականություն

1. Blockchain <https://blockchain.info/markets/>
2. Cryptocurrency Market Capitalizations/ CoinMarket-Cap <https://coinmarketcap.com/>

Cryptocurrency: You Call It Bitcoin

Lilit Ovsyan and Hakob Hakobyan | December 5, 2017
Translator | Lilit Maghakyan

Recently, we often come across the terms "cryptocurrency" and "bitcoin". Heated discussions concerning the spread of cryptocurrency and the change in its price still continue.

After all, what is cryptocurrency? And how is it made?

Cryptocurrency is a means of payment, the stocktaking of which is decentralized. It is an encrypted piece of information, which is impossible to copy (hence the term "crypto" is used in the name). The term "cryptocurrency" came into circulation after the article concerning bitcoin - a virtual currency and payment system. The concept was introduced by Satoshi Nakamoto. Till now his identity is not clear. Satoshi Nakamoto is more likely an individual or a group of individuals who use the given pseudonym. Nakamoto introduced the concept on 31 October, 2008, and it began spreading in 2009. A year after the creation of the project, Nakamoto left the concept and passed his authority to Gavin Andresen.

Bitcoin came into circulation with the price of only \$1, however, after a short time it established a record price, surpassing the amount of \$5000. Cryptocurrencies are based upon the technology of blockchain.

A blockchain is a decentralized, digitized, open access (public) ledger where all cryptocurrency transactions [i] are registered. The records about the transactions registered in the ledger are constantly added in chronological order, which allows the participants of the transaction to follow the execution of the transactions without centralized registration as each participant receives a copy of the blockchain, which is uploaded automatically.

Presently, this technology is mainly applied to follow and control cryptocurrency transactions, which is actualized by a so-called Distributed Ledger Technology (DLT). At the same time, it is possible to encode and include any kind

of document in the blockchain. It is impossible to make changes in the downloaded unit, and all the participants can check its verity by using the blockchain instead of the centralized registration system.

A block is the ongoing part of the blockchain, which registers some or all the transactions. After completing the process of registration of a block, it is connected to the chain which is a permanent data registration base. Once a block is over, a new one is created which is chronologically connected to the block-chain. Each block contains the hash (hash - a cryptographic function of 256 bits [ii]) of the previous block. As a result, the blockchain contains the data of its users and information about their transactions from the initial block to the most recent one.

Blockchain is made in a way that the recorded data cannot be changed, and the information is not copied but distributed in the chain.

Thus, the technology of blockchain is based upon the following main principles [iii].


- **Distributed chain**
Each user has data availability.
- **Peer-to-Peer deals**
Deals are made between participants of the same level, without a centralized system.
- **Transparency with Pseudonymity**
Deals are available to each participant and everyone has a pseudonym of 30 and more characters.
- **Impossibility of cancellation of the recorded data**
From the moment of its creation, the record is not susceptible to change.
- **Computational Logic**
Participants can form algorithms of actions, which will make deals automatically.

Description of Transactions

In his article Satoshi Nakamoto defines electronic currency or coin as a chain of digital signatures [iv]. Each user makes additions to the chain via the function of encoding

the previous transaction (hash function) and adds the public key of the next user appending to the end of the chain. The receiver of the transaction can check the electronic signaturesto identify the transaction participants [v].

The cryptocurrency created by a blockchain is kept in special electronic wallets. The process of getting a currency is called mining. The process is available to everyone. Anyone can begin searching for cryptocurrencies. Only a special security software program needs to be installed in a computer.



In case of wide use, cryptocurrencies can bring significant changes to the financial system. Due to the implementation of this innovation, the transactions will become quite easy, their fees will be reduced, and the time spent on them will be shortened, as well. Nevertheless, Eugene Kaspersky thinks that cryptocurrencies will work well only after 300 years [vi].

One of the advantages of cryptocurrencies, as it was mentioned, is the low price of transactions. Those transactions imply rather low fees, comprising 0-1% of the money transacted. For the comparison, we can mention that in the case of online payment systems the above mentioned fee comprises 2-4% of the money transacted, and in the case of using the services of money transfer companies 8-9%.

The transactions of virtual cryptocurrency take place faster than those of real ones. In the case of bitcoins the transaction may last from 10 to 60 minutes. We should also mention that cryptocurrency payments are made twenty-four-hour, without any time restrictions.

Another advantage is the controllable risk of inflation. Unlike cryptocurrencies, real currencies are greatly influenced by governments and central banks, which can also influence the money supply. In the case of virtual currencies, inflation may occur when, in a given condition of fixed supply, some cases of decrease of demand or growth of the supply of the offered bitcoin are observed.


Perhaps one of the greatest advantages is the fact that the transactions do not require personal data. A bitcoin user may protect his money via encryption. Unlike other means of payment, a hidden charge of money by traders is not possible.

Disadvantages:

1. The prices can change drastically, and those changes are impossible to predict.

	From January to October, 2017	During last 12 months	Average annual change since 2013
Bitcoin	+495%	+717%	+1010%
Ethereum	+4169%	+3016%	+2080%
S&P 500	+14%	+20%	+13%
Gold	+13.5%	+11.5%	+4%

The change in the price of cryptocurrencies in comparison with the change in the prices of the American S&P index fund and the price of gold [vii][viii]



2. As there is no control, the cryptocurrencies can be used for criminal purposes, such as money laundering, tax evasion, and frauds like Ponzi scheme. Ponzi scheme is a fraudulent investment operation: the investors are promised high returns in low-risk conditions. Because of the lack of control, many can fall into the "trap".
3. There is a great probability of tax avoidance.
4. The ubiquitous use of bitcoin will lead to a condition when demand exceeds supply, as a consequence of which its price will consistently grow. The prices of services and goods will decrease, and such a deflation in its turn will have a negative effect on the economic growth.
5. Like any currency, bitcoin is also naturally attractive for thieves. Though few, some cases have been recorded anyway. In 2011, one of the users announced that 25000 bitcoins had been stolen from his "wallet". And in 2015, it became known that 50000 bitcoins, nearly 230000 US dollars, had been stolen from the Webhost Company.

The Central Bank in Armenia exhorts to abstain from the usage of cryptocurrencies, until the introduction of respective regulations [ix].

In the Russian Federation they work on introducing specific mechanisms of control. The President of the Russian Federation states that the creation of specific mechanisms of control is essential for minimizing tax evasion, dirty money laundering, funding of terrorism and counterfeit. It is a grave danger in a state of absence of control.

The former chief economist of the International Monetary Fund, Kenneth Rogoff, predicts the downfall of bitcoin in the near future.

The President of the European Central Bank, Mario Draghi, has announced that only one currency can be circulated in the Eurozone, and the Eurozone countries cannot issue national currencies [x].

But in Japan, for instance, bitcoin and other cryptocurrencies are officially considered means of payment.

We should mention that virtual currencies, including bitcoin, are not considered electronic money in Armenia.

Despite the noise it has made, cryptocurrency has many advantages that can be used for economic and business development. Naturally, it is too early to speak about the spread of bitcoin in Armenia. But as in other countries, in Armenia, too, the implementation of bitcoin will contribute to economic growth. The absence of control and shady deals are of considerable danger. The best way to secure the users from the risks is the increase of the role of the knowledge and the abolishment of information asymmetry. If during a transaction one party is more informed than the other, there is a great probability of deceiving. On the other hand, the possession of the respective information will prevent the loss of the means of payment.

References

- [i] Blockchain Explained
<http://www.investopedia.com/terms/b/blockchain.asp>
- [ii] But how does bitcoin actually work?
<https://www.youtube.com/watch?v=bBC-nXj3Ng4>
- [iii] The Truth About Blockchain
<https://hbr.org/2017/01/the-truth-about-blockchain>
- [iv] "Bitcoin: A Peer-to-Peer Electronic Cash System"
Satoshi Nakamoto 2008
- [v] Dotted line-identification, broken line-signature, thick line-encoding (hashing)
- [vi] Kaspersky: the full potential of cryptocurrency will become available 300 years later.
<http://www.banks.am/am/news/fintech/14499>
- [vii] Market Price
<https://blockchain.info/charts/market-price?timespan=1year>
- [viii] Market Price
<https://blockchain.info/charts/market-price?timespan=all>
- [ix] What is cryptocurrency? Where are the risks?
<http://newsarmenia.am/am/news/dramapanak/-inch-kriptoarjujty-ev-vortex-en-riskery/>
- [x] Mario Draghi rejects suggestion of Estonian cryptocurrency. <http://www.banks.am/am/news/fintech/14382>

Bibliography

1. Blockchain <https://blockchain.info/markets/>
2. Cryptocurrency Market Capitalizations/ CoinMarket-Cap <https://coinmarketcap.com/>

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
TRANSLATIONS**

ԵԿԲ-ն կանգնած է նոր խթանող փաթեթի ներդրման որոշում կայացնելու առաջ

Հուլիս 25, 2019 | Հակոբ Հակոբյան
Financial Times | ECB faces key decision over launch of fresh stimulus

ԵԿԲ-ում (Եվրոպական կենտրոնական բանկ) իր աշխատանքային վերջին ամսվա համար Մարիո Դրագին իր առջև դրել է ինդիք. վերագործարկել տնտեսական խթանող փաթեթը գլոբալ աճը խթանելու ակնկալիքով:

Այն անձին, որ խոստացել էր «անել ամենը» Եվրոն փրկելու համար, քիչ ժամանակ է մնացել: Դրագին պատրաստվում է պաշտոնը լքել հոկտեմբերին, և մինչ այդ, ինչպես ակնկալում են շուկան և ԵԿԲ դիտորդները, ԵԿԲ-ն կսկսի քաղաքականության խթանիչ գործընթացը: Հարցն այն է, թե որքան արագ կընթանա գործընթացը, և Ֆրանկֆուրտում հորիզոնի հանդիպումը կարող է որոշիչ լինել ժամկետների հաստատման հարցում:

Հանդիպումը կկայանա ԱՄՆ Դաշնային պահուստային ֆոնդի (այսուհետ՝ Ֆեդռեզերվ) նմանատիպ կարևորություն ունեցող որոշման կայացումից մի քանի օր առաջ: Ներդրողներն ակնկալում են, որ երկու կենտրոնական բանկերը, որոնք պատասխանատու են համաշխարհային երկու կարևոր արժույթների համար, կգործեն մոտակա երկու ամիսներին:

Դրագին կանգնած է երկընտրանքի առաջ. կամ գործարկել դրամավարկային խթանող փաթեթը՝ վտանգելով Եվրոն միայն կարճաժամկետ ազդեցությամբ, կամ սպասել մինչև սեպտեմբեր և ժամանակ տալ խորհրդին՝ պատրաստվելու հակադարձող գործողություններին:

Առավել ակնհայտ խթան կարող է լինել բանկային ավանդային տոկոսադրույթները -0.4%-ից ավելի ցածր իջեցնելը: Առավել նշանակալից խթանող փաթեթը կարող էր ներառել բանակական մեղմացման ծրագիր (quantitative easing programme), որի շրջանակներում

ԵԿԲ-ն կգներ շուկայից շուրջ 2.6 տրիլիոն Եվրոյի պետական և մասնավոր պարտատոմսեր:

Նախորդ անգամ՝ դեկտեմբերին, պարտատոմսերի գնումը դադարեցվեց Եվրագոտու տնտեսության բարելավումն ապացուցող ցուցանիշների ներքո: Չորեքշաբթի հրապարակված բիզնես-հետազոտության համաձայն՝ համաշխարհային առևտրում այդ ժամանակից ի վեր առկա լարվածությունն ազդել է Եվրագոտու արտադրական հատվածի վրա՝ դանդաղեցնելով աճը և առաջացնելով մտավախություն, որ դանդաղեցումը կարող է տարածվել ծառայությունների ոլորտի վրա և խաթարել սպառողների վստահությունը:

«Հաշվի առնելով շարունակական մեղմացումը և գնաճը, որը շարունակում է դուրս գալ թիրախային մակարդակից՝ մենք ակնկալում ենք, որ ԵԿԲ-ն կձևավորի նոր խթանող քաղաքականություն», - ասում է «Investec»-ի տնտեսագետ Վիկտորիա Զլարկը:

ԵԿԲ նախագահի համար ռիսկային է այն, որ հուլիսի 31-ին ԱՄՆ կենտրոնական բանկի նիստից առաջ գործողություններ ձեռնարկելը կարող է հրահրել իր գործընկեր Ջեյ Փաուելին նվազեցնել տոկոսադրույթները ոչ թե 25, այլ 50 տոկոսային կետով, ինչն ակնկալում են ներդրողները:

ԱՄՆ-ի՝ տոկոսադրույթների ավելի խորը կրճատումը ներկայումս կարող է առաջ բերել Ֆեդռեզերվի կողմից լրացուցիչ գործողությունների կատարման ակնկալիքներ առաջիկա 12 ամիսների համար, ինչը նվազման ճնշում կգործադրի դոլարի վրա: Վերջինս ձեռնտու չէ Եվրագոտու արտահանողներին:

Վերջին ամիսներին փոխարժեքը քաղաքական ինդիք է դարձել, քանի որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ուժեղացրել է իր պնդումները, թե այլ երկրներ օգուտ են քաղում գերարժևորված դոլարից:

Չնայած Դրագին բազմիցս պնդել է, որ ԵԿԲ-ի մանդատը գների կայունությունն է, և ոչ արժույթի արժեզրկումը, Եվրոն վերջերս փոքր-ինչ արժեզրկվել է դոլարի նկատմամբ, և նա չի ցանկանա, որ այդ միտումը փոխվի: Զանի դեռ Ֆեդռեզերվը ունի

տոկոսադրույքների իջեցման միջակայք 2.25-2.5% սահմաններում, ԵԿԲ-ն մանևրելու ավելի քիչ տեղ ունի:

«Նրանք կարող են եզրակացնել, որ եթե արժույթային պատերազմում կրակ բացելու համար միայն մեկ կրակահերթ է մնացել, ապա հարկավոր է զգույշ լինել՝ երբ է ձգվում ձգանք», - ասում է Ռիչարդ Բարվելը՝ «BNP Paribas Asset Management»-ի մակրոտնտեսական վերլուծության ղեկավարը: «ԵԿԲ-ն զուցե ցանկանա սպասել՝ հասկանալու՝ արդյոք Ֆեդռեզերվը տոկոսադրույքներն ընդհանրապես կկրճատի, թե դա կանի նախքան 20-30 տոկոսային կետերի միջակայքը սպառելը, ինչն անհրաժեշտ է տոկոսադրույքների իջեցման համար»:

Այսպես, ԵԿԲ որոշ դիտորդներ կարծում են, որ բանկը սեպտեմբերին տոկոսադրույքների նվազեցում է ենթադրում՝ հղում անելով քաղաքականության վերաբերյալ իր ուղերձին, որը կենտրոնական բանկերի քաղաքականության մեջ հայտնի է որպես առաջընթաց ուղղորդում (forward guidance): «Bloomberg»-ի հարցմանը մասնակցած 30 տնտեսագետից միայն երկուսն են այս շաբաթ տոկոսադրույքների կրճատում ակնկալում:

Հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում Դրագին կարող էր քննարկել նաև տոկոսադրույքների բազմաստիճան համակարգ ներդնելու հնարավորությունը՝ մասնավոր վարկատուների բացասական տոկոսադրույքների բեռը նվազեցնելու համար:

Մելվին Կրուլը՝ Ստենֆորդի համալսարանի հոլդեր ինստիտուտի ավագ գիտաշխատողը, բազմաստիճան համակարգը որակեց որպես «հեշտ գործ»։ «Անկասկած, այն կներկայացվի մինչև սեպտեմբեր, զուցե նույնիսկ այս շաբաթ»:

Ամեն դեպքում՝ ներդրողների ակնկալիքները ԵԿԲ նոր գործողությունների վերաբերյալ այնքան մեծ են, որ շուկայի Էֆեկտի զգալի մասն արդեն ներառված է ակտիվների գների մեջ: Եվրոպական կառավարությունները վաճառում են պարտքային արժեթղթեր ռեկորդային ցածր եկամտաբերությամբ՝ QE (Quantitative easing)՝ քանակական մեղմացման

ծրագիր) վերսկսման արդյունքում գների բարձրացում ակնկալելով:

Արդյունքներն զգացվում են իրական տնտեսության մեջ. այս ամիս տեղական գերմանական բանկը կամ Նյուրնբերգի «Sparkasse»-ն ասել է, որ շարունակական ցածր տոկոսադրույքների պատճառով կվակվի ավելի քան 20.000 ինայոդական հաշիվ: Բայց արդյոք շուկաները գերազնահատել են Դրագիի կարողությունը նոր խթան ներկայացնելու առումով:

Քանակական մեղմացման (QE) վաղեմի քննադատները, ինչպիսիք են Նիդեռլանդների կենտրոնական բանկի ղեկավար Կլաս Կնոթն ու Բուլղերբանկի նախագահ Յենս Ուայդմանը, այս տարվա սկզբում մի կողմ թողեցին անհամա-ձայնությունները՝ Դրագիին հաջորդելու հարցում իրենց հնարավորությունները մեծացնելու համար, սակայն Քրիստին Լագարդի ընտրվելուց հետո, նրանք լռելու ավելի քիչ պատճառ ունեն:

Վերջին շաբաթների ընթացքում շատ ջերմ են արտահայտվել այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք են ԵԿԲ գործադիր խորհրդի անդամ Բենոիտ Սուրբեթը և Ֆրանսիայի բանկի ղեկավար Ֆրանսուա Վիլերո դե Գոլը:

«Չնայած Դրագիի շուրի վարագույրը իջավ, շուկան դեռ հավատում է, որ դա էր միակ հնարավոր լուծումը», - ասաց պարոն Բարվելը: «Հսկայական հավատ կա, որ խորհուրդը նորից կպարի նրա երաժշտության տակ»:

Դաշնային պահուստը կրճատում է տոկոսադրույքները, ինչը Փաուելն անվանում է «միջըջափուլային ճշգրտում»

Օգոստոս 1, 2019 | Հակոբ Հակոբյան
Financial Times | Federal Reserve cuts rates in what Powell calls a "mid-cycle adjustment"

Ֆեդերալ պահուստն իջեցրեց իր հիմնական տոկոսադրույքը 25 տոկոսային կետով, որն առաջին կրճատումն էր ֆինանսական ճգնաժամից հետո, բայց հիասթափեցրեց ներդրողներին՝ այս քայլն անվանելով ոչ թե ավելի ագրեսիվ դրամավարկային մեղմացման ցիկլի սկիզբ, այլ «միջըջափուլային ճշգրտում»: Միակողմանի կրճատումը, որը անակնկալ չէր տևտեսագետների և ներդրողների համար, պայմանավորված էր նրա առանցքային պաշտոնյաների աճող մտավախությամբ՝ կապված համաշխարհային տնտեսության թուլության և առևտրային սաստկացմամբ պայմանավորված «անորոշությամբ»:

Կենտրոնական բանկի Դաշնային բաց շուկայական կոմիտեն (Federal Open Market Committee) հայտնել է, որ պատրաստ է «պատշաճ կերպով աջակցել ընդլայնմանը»՝ ակնարկելով հետագայում տոկոսադրույքների կրճատումների մասին, և զուգակցելով այս քայլը Ֆեդերալի հաշվեկշռում կրճատման որոշմանը, որը կայացվել էր նախատեսվածից երկու ամիս շուտ:

Այդուհանդերձ, ասուլիսին Ֆեդերալի նախագահ Ջեյ Փաուելի մեկնաբանությունները վախեցրել են ներդրողներին՝ ասելով, որ «FOMC»-ը ավելի զգուշավոր կլինի մեղմացման մեջ, քան սպասվում է: Ֆեդերալի հանդիպումից առաջ շուկաներն ակնկալում էին մինչև 2019 թվականի ավարտը տոկոսադրույքների թվով երեք իջեցում:

Հինգշաբթի օրը ասիական բաժնետոմսերը հիմնականում ցածր էին: Առևտրի սկզբում հոնկոնգյան «Hang Seng», Շանհայի չինական «CSI 300» ինդեքսները և Շենժենում ցուցակված բաժնետոմսերը նվազել էին մոտ 0.5% -ով: «Մենք դա, ըստ էության, ընկալում ենք որպես միջըջափուլային ճշգրտում», - ասել է Փաուելը՝

հավելելով, որ Ֆեդերալի պատմության մեջ դա տեղի է ունեցել ավելի վաղ: «Ես դա հակադրում եմ սկզբի հետ, օրինակ՝ կրճատման երկար ցիկլի սկիզբի: Սա այն չէ, ինչ մենք հիմա տեսնում ենք: Սա հիմա մեր տեսակետը կամ հեռանկարը չէ»:

Արձագանքելով Կենտրոնական բանկի ագրեսիվ տոնին՝ «FOMC»-ի երկու անդամ անհամաձայնություն հայտնեցին: Կանգաա Նահանգի Ֆեդերալի նախագահ Էսթեր Ջորջը և Բոստոնյան Ֆեդերալից Էրիկ Ռոզենգրենը ասում են, որ նրանք ավելի շուտ տոկոսադրույքները կպահպանեն կայուն, քան ցածր վիճակում:

ԱՄՆ-ում S&P 500 բաժնետոմսեր անկում են ապրել Փաուելի նկատառումների ժամանակ՝ առևտրային օրվա ընթացքում նվազելով 1.1%, իսկ ԱՄՆ դոլարը մյուս արժույթների համեմատ աճելով 0.4%-ով:

ԱՄՆ գանձապետարանի պարտատոմսերը դժվարությամբ փորձեցին «կարդալ» Ֆեդերալի հայտարարության և մամլո ասուլիսի խառը ազդանշանները, սակայն Փաուելի խոսքից հետո եկամտի կորը կրկին հակադարձվեց: ԱՄՆ գանձապետարանի երկամյա պարտատոմսերի եկամտաբերությունը 6.5 բազային կետով բարձր էր 10-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունից՝ արտացոլելով այն հոռետեսությունը, որ Ֆեդերալը կշարունակի աջակցել ԱՄՆ տնտեսությանը: Վերջին 50 տարվա ընթացքում ԱՄՆ-ում հակադարձ եկամտաբերության կորը նախորդել է յուրաքանչյուր անկմանը:

«FOMC»-ն իջեցրել է դաշնային ֆոնդերի տոկոսադրույքի նպատակային միջակայքը մինչև 2-2.25%, իսկ ուղեկցող հայտարարության մեջ նշվում է, որ պահպանվում է ակնկալիքը հետագա խթանման համար:

«Քանի որ հանձնաժողովը քննարկում է նպատակային միջակայքի հետագա ուղին դաշնային ֆոնդերի տոկոսադրույքի համար, այն կշարունակի վերահսկել մուտքային տեղեկատվության ազդեցությունը տնտեսական հեռանկարների վրա և համապատասխանաբար կգործի ընդլայնումը պահպանելու համար»:

Փաուելը, ակնարկելով ևս մեկ տոկոսադրույթի սպասվելիք իջեցումը, հավանաբար չի ցանկացել ավելի շատ երաշխիքներ տրամադրել:

«Նրանք չեն կանխատեսում, թե ինչ են պատրաստվում անել այս պահից», - ասաց Բլեյբլիի խորհրդատվական խմբի ղեկավարներից Փիթեր Բուկվարը: «Ամեն ինչ պարզ է, սակայն սեպտեմբերյան հանդիպումից վեց շաբաթ առաջ նրանք ուզում էին իրենք իրենց ընտրության հնարավորություն տալ: Եթե տվյալները վատթարանան, կնվազեցնեն, բայց եթե ամեն ինչ մնա նույնը, նրանք կարող են գնալ ցանկացած ուղղությամբ»:

«Pimco»-ի ամերիկացի տնտեսագետ Թիֆանի Ուայլ-դինգն ասում է, որ մամուլի ասուլիսում ընդգծված էր Փաուելի խնդիրը՝ համաձայնության չեկած հանձնաժողովի համար հետագա քայլերի որոշակիացման հարցում: *«Այսօր փոխզիջում կար», - ասաց նա:*

Հունիսի սկզբից ի վեր Ֆեդռեզերվի պաշտոնյաները մատնանշել են տոկոսադրույթների կրճատումը՝ համաշխարհային տնտեսական ցնցումներից ԱՄՆ տնտեսության համար որոշ պաշտպանություն ապահովելու համար: Չնայած գործազրկությունը մնում է ռեկորդային ցածր մակարդակում, իսկ սպառումը եղել է զգալիորեն կայուն, նրանք անհանգստացած են այլ տվյալներով, այն է՝ երկրորդ եռամսյակում ԱՄՆ-ի աճի դանդաղ ընթացքով, թույլ ներդրումներով և «համառորեն» ցածր գնաճով, որոնք ցածր են Ֆեդռեզերվի 2 տոկոսանոց թիրախից:

25 տոկոսային կետով տոկոսադրույթների կրճատումը հիասթափեցրեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին, որը բարձրաձայն պնդում էր, որ Ֆեդռեզերվն առավել ագրեսիվ պետք է իջեցնի տոկոսադրույթները՝ այս շաբաթվա հանդիպմանն ընդառաջ: Չորեքշաբթի ուշ երեկոյան Twitter-ում նախագահն ասել է. *«Շուկան ուզում էր Ձեյ Փաուելից և Ֆեդերալ ռեզերվից լսել, որ սա երկարատև և ագրեսիվ տոկոսադրույթների իջեցման ցիկլի սկիզբն է, որը համընթաց կլինի Չինաստանի, Եվրամիության և աշխարհի այլ երկրների հետ: Ինչպես միշտ՝ Փաուելը մեզ հիասթափեցրեց»:*

Փաուելի տոկոսադրույթների հետագա իջեցման հետ կապված որոշումը նշանակալի շրջադարձ է՝ համեմատած անցած տարվա պաշտոնավարման առաջին ամիսների ընթացքում վարած քաղաքականության խստացման հետ:

2018 թվականի վերջին շուկայում դանդաղեցման և անկման նշանների ֆոնին նա դադարեցրեց խստացնող դրամավարկային քաղաքականությունը և, ի վերջո, մեղմացրեց այն բանից հետո, երբ մայիսին ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առևտրային բանակցություններ սկսվեցին, իսկ Թրամփն սպառնաց Մեքսիկային ներմուծման սակագների կտրուկ աճով:

Ֆեդռեզերվի հաշվեկշռի կրճատումը նպատակ ուներ պարտատոմսերի գնումների մի քանի փուլերից հետո ԱՄՆ կենտրոնական բանկի ակտիվները մոտեցնել նախաճգնաժամային մակարդակին, բայց այն կավարտվի օգոստոսի 1-ին, և ոչ սեպտեմբերի վերջին: Չորեքշաբթի օրը Ֆեդռեզերվը նաև նշել է, որ իջեցնելու է այն տոկոսադրույթը, որը վճարում է բանկերին՝ իրենց ավելցուկային պահուստները կենտրոնական բանկում պահելու համար (2.35%-ից մինչև 2.10%), ինչը ևս մեկ քայլ է՝ ուղղված վարկավորման մեղմացմանը և տնտեսության մեջ փող ներդնելուն:

Այս փուլում Ֆեդռեզերվի պաշտոնյաները ԱՄՆ-ի տնտեսության մեջ չեն ակնկալում ավելի խորը անկում, որը կպահանջի շատ ավելի մեծ մեղմացում: *«Աշխատանքի շուկան շարունակում է մնալ ուժեղ և... տնտեսական ակտիվությունն աճել է միջին տեսլերով», - ասվում է FOMC-ի հաղորդագրության մեջ:*

Անցյալ ամիս Ֆեդռեզերվի պաշտոնյաների հրապարակած միջին աճի վերաբերյալ (մեդիանային աճ, median projection) կանխատեսումը ենթադրում էր 2019 թվականին 2.1% աճ, 2020-ին՝ 2%, իսկ 2021-ին՝ 1.8%: ԱՄՆ-ի՝ այս ամիս հրապարակած վերջին կանխատեսումից պարզվեց, որ սա ավելի բարենպաստ է: ԱՄՆ-ում այս տարի սպասվում է 2.6% աճ, չնայած ենթադրվում է, որ 2020 թվականին արտադրությունը կդանդաղի մինչև 1.9%:

Գերմանիան կարող է անկում ապրել. նախագուշացնում է Բունդեսբանկը

Օգոստոս 19, 2019 | Հակոբ Հակոբյան
Financial Times | Germany likely to tip into recession, Bundesbank warns

Գերմանիայի կենտրոնական բանկը նախագուշացրեց, որ, ամենայն հավանականությամբ, երրորդ եռամսյակում Եվրոպայի խոշորագույն տնտեսությունը կսկսի անկում ապրել գերմանական ապրանքների արտահանման կտրուկ անկման և արդյունաբերական արտադրանքի կրճատման պատճառով:

Բունդեսբանկն իր ամենամյա տվյալների թարմացման մեջ նշել է՝ ակնկալում է, որ Գերմանիայի տնտեսությունը «թուլացած» կմնա երեք ամիս՝ մինչև սեպտեմբեր՝ հավելելով, որ երեք ամիսների ընթացքում 0.1% անկումից հետո «կարող է անկումը շարունակվել մինչև հունիս»:

Նախագուշացումը զուգահեռվեց գերմանական տնտեսության մասին մռայլ ազդանշաններին, որոնք շրջանի լոկոմոտիվից վերածվել էին դրա հետաձգվածներից մեկի՝ նվազեցվելով ավտոարդյունաբերության անկմամբ, ինչն էլ համադրվում է ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմով և ԵՄ-ից Բրիտանիայի քաոսային ելքի հեռանկարով:

Երկրորդ եռամսյակում արտաքին առևտրի դանդաղեցումը և արդյունաբերական արտադրության անկումը մասնակիորեն փոխհատուցվել են տնային տնտեսությունների աճի և կառավարության կողմից ծախսերի մեծացման հաշվին: Այդուհանդերձ Բունդեսբանկը նախագուշացրեց, որ վստահ չէ՝ որքան կարող է շարունակվել այս գործընթացը:

«Այագա իրադարձությունները կախված կլինեն նրանից, թե որքան կտևի ներկայիս երկակի իրավիճակը և ինչ ուղղությամբ կգարգանա», - ասվում է հայտարարության մեջ: «Ներկայումս պարզ չէ՝ կվերականգնվե՞ն արտահանումն ու, հետևաբար, արդյունաբերությունը՝ նախքան երկրի տնտեսությունը

ավելի շատ ազդեցություն կկրի»:

Վերջին շաբաթների ընթացքում Գերմանիայի՝ մեկ տասնամյակի հարկաբյուջետային ավելցուկի խոստումը քննադատության է ենթարկվել տնտեսագետների, գործարար խմբերի, ընդդիմության առաջնորդների և նույնիսկ կառավարական կոալիցիայի առանձին անդամների կողմից:

Եվրոպական կենտրոնական բանկը հաջորդ ամիս մտադիր է էլ ավելի նվազեցնել տոկոսադրույթները, սակայն Մարիո Դրագին բազմիցս պնդել է, որ եվրագոտու կառավարությունները միության տնտեսությունը փրկելու համար չպետք է ապավինեն միայն դրամավարկային քաղաքականությանը:

Նախանշաններ կան, որ Գերմանիայի կառավարությունը պատրաստվում է խթանող փաթեթ, ինչպես նաև միջոցառումներ կիրառել՝ ներդրումները խթանելու և ածխածնի արտանետումները նվազեցնելու համար: Ֆինանսների նախարար Օլաֆ Շուլցը կիրակի հայտարարել է, որ կառավարությունը պետք է կարողանա իրականացնել 50 միլիարդ եվրոյի խթանող փաթեթ այնպես, ինչպես 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից հետո:

Վերջին տվյալները ցույց են տալիս, որ այս տարվա երկրորդ կեսին Գերմանիայի տնտեսական թուլությունը պահպանվում է: Անցյալ շաբաթ «ZEW»-ի (Zentrum für Europäische Wirtschaftsforschung) ֆինանսական շուկայի փորձագետների անցկացրած հարցումը ցույց տվեց, որ օգոստոսի վերջին տնտեսական սպասումները իջել են մինչև -44.1 մակարդակի, որն ամենացածրն է 2011 թվականի՝ եվրագոտու ֆինանսական ճգնաժամից ի վեր և շատ ավելի հոռետեսական է, քան սպասում էին վերլուծաբանները:

Երկուշաբթի օրը «Deutsche Bank»-ն իջեցրեց իր կանխատեսումը՝ ասելով, որ Գերմանիայի տնտեսությունն այս տարի կաճի ընդամենը 0.3%-ով, իսկ հաջորդ տարի՝ 0.7%-ով, և կանխատեսեց, որ այն արդեն «տեխնիկական անկման մեջ է», որը սահմանվում է որպես բացասական աճ երկու անընդմեջ քառորդներում:

«Մենք գիտակցում ենք, որ այդ կրճատումները պատշաճ չեն արտացոլում այն ռիսկերի կուտակումը, որոնց հետ մենք բախվել ենք վերջին մի քանի եռամսյակների ընթացքում», - ասաց Ստեֆան Շնայդերը՝ «Deutsche Bank»-ի գլխավոր տնտեսագետը:

«Չաշվի առնելով գլոբալ տնտեսության ավելի փխրուն վիճակը՝ մեկ կամ մի քանի ռիսկերի իրացումը կարող է հեշտությամբ մղել տնտեսությունը բոլորովին այլ սցենարի, որտեղ տոկոսային կետի՝ մի քանի տասնյակներով վերանայումը չի բավականացնի»:

Բազմաթիվ տնտեսագետներ վախենում են, որ Գերմանիան, որն անցած տարի հազիվ էր խուսափել տեխնիկական անկումից, կանգնած է երկարատև անկման վտանգի առջև, քանի որ դրա թույլ արտադրական հատվածը ներթափանցում է նախկինում աշխույժ ծառայությունների և սպառման ոլորտներ:

Բունդեսբանկը նշել է, որ տնտեսական դանդաղեցումն սկսել է ազդեցություն ունենալ աշխատաշուկայի վրա՝ հավելելով, որ երկրորդ եռամսյակում զբաղվածության աճը «զգալիորեն դանդաղ է», իսկ աշխատավարձերի աճը՝ «զգալիորեն ավելի քիչ»:

Միևնույն ժամանակ, ըստ երկուշաբթի հրապարակված, վերանայված տվյալների, եվրագոտում գնաճը շարունակում է ընկնել, ինչը կամրապնդի փաստարկները՝ ի նպաստ ԵԿԲ դրամավարկային քաղաքականության հետագա մեղմացման:

Յուրիսին «Eurostat»-ը վերանայել է եվրագոտում իր գնաճի մակարդակը՝ նախնական 1.1%-ից հասցնելով մինչև 1%, ինչը զգալիորեն ցածր է նախորդ ամսվա գնաճից 1.3%-ով և նույնիսկ ավելի ցածր, քան ԵԿԲ-ի թիրախը, որը մոտ է 2%-ին:

Չինաստանը գործարկեց խթանող քաղաքականություն՝ իջեցնելով պահուստավորման նորմը իր ամենացածր մակարդակին 2007 թվականից ի վեր

**Սեպտեմբեր 6, 2019 | Հակոբ Հակոբյան
Bloomberg | China Ratchets Up Stimulus, Cutting Reserve Ratio to Lowest Level Since 2007**

Չինաստանի Կենտրոնական բանկը հայտարարել է, որ բանկերի համար կնվազեցնի պարտադիր պահուստավորման մակարդակը՝ մինչև ամենացածր մակարդակը 2007 թվականից ի վեր, ինչը կհանգեցնի տնտեսության մեջ իրացվելիության ավելացմանը՝ հաշվի առնելով ինչպես ներքին անկումը, այնպես էլ առևտրային պատերազմը:

Չինաստանի ժողովրդական բանկը ուրբաթ օրն իր կայքում հայտնել է, որ բոլոր բանկերի համար պարտադիր պահուստավորման մակարդակը կընվազեցվի 0.5 տոկոսային կետով, որն ուժի մեջ կմտնի սեպտեմբերի 16-ին: ՉԺԲ-ն նաև որոշ քաղաքային առևտրային բանկերի համար կնվազեցնի պարտադիր պահուստավորման մակարդակը մեկ տոկոսային կետով, ինչը ուժի մեջ կմտնի երկու փուլով՝ հոկտեմբերի 15-ին և նոյեմբերի 15-ին:

Ըստ ՉԺԲ-ի՝ կրճատումը կազատի 900 միլիարդ յուան (126 միլիարդ դոլար) իրացվելիություն, ինչը կօգնի փոխհատուցել առաջիկա հարկային վճարումների խստացնող ազդեցությունը: Սա ավելին է, քան նախորդող հունվար-մայիս ամիսների իջեցումները, որոնք ազատել էին համապատասխանաբար 800 միլիարդ և 280 միլիարդ յուան:

Այս փոփոխությունը նպատակ ունի աջակցել պահանջարկին՝ վարկեր տրամադրելով փոքր ձեռնարկություններին, և արձագանքել նախորդ տարվա կրճատումներին: Այն կարող է նաև սահմանափակ ճնշում գործադրել արդեն իսկ թուլացող յուանի վրա, ինչը, գուցե, դժգոհություն առաջացնի նախագահ Դոնալդ Թրամփի մոտ: Վերջերս ՉԺԲ-ի պաշտոնյաները նշեցին, որ

վախենում են ավելի հավակնոտ մեղմացման միջոցառումներից և մինչ այժմ ձեռնպահ են մնացել հետևել ԱՄՆ Դաշնային պահուստային ռեզերվին՝ բազային տոկոսադրույքների իջեցման առումով:

«Այս նվազեցումը «չի արտացոլում ազդեցիվ մեղմացնող քաղաքականությունը», - ասում է Սինգապուրի «Commerzbank AG»-ի զարգացող շուկաների գծով տնտեսագետ Ժո Յանս:

«Իրականում Չինաստանը վերջերս խստացրեց անշարժ գույքի մեծ ծավալներով ֆինանսավորումը: Հետևաբար սա դեռևս վերա-բալանսավորում է արտադրական հատվածի ֆինանսավորման ծախսերը, ինչպես նաև անշարժ գույքի ոլորտում իրացվելիությունը նվազեցնելու համար՝ ակտիվների «փուչիկից» խուսափելու նպատակով»:

Stoxx Europe 600 և S&P 500 ինդեքսների ֆյուչերսները հայտարարությունից հետո շարունակեցին աճել: ՕՖշո-րային յուանը երեկոյան 6:30-ին Պեկինում ավելացրեց 0.35%՝ 7.1128 դոլար:

Օգոստոսին Չինաստանի տնտեսությունը կրկին թուլացավ հուլիսյան վատ արդյունքներից հետո և, հավանաբար, կշարունակի վատթարանալ տարվա ընթացքում: Չինաստանի և ԱՄՆ-ի միջև վերջին շրջանի առևտրային լարվածությունը տարածվեց ֆինանսական ճակատում այն բանից հետո, երբ Չինաստանը թույլ տվեց, որ արժույթն իջնի 7\$-ից ցածր, ինչը Միացյալ Նահանգներին դրդեց Չինաստանին անվանել արտարժույթային մանիպուլյատոր:

Ինչ են ասում Բլումբերգի տնտեսագետները

«ՉԺԲ-ն ավելի շատ հնարավորություններ է ձեռք բերել նաև դրամավարկային քաղաքականությունը մեղմելու համար, քանի որ ԱՄՆ-ի և Չինաստանի պետական 10-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունն ամենաբարձր մակարդակում է 2018 թվականից ի վեր: Յուանի արժեզրկումը ՉԺԲ-ին տալիս է ավելի մեծ ճկունություն դրամավարկային քաղաքականության իրականացման գործում»:

Կենտրոնական բանկը շեշտեց, որ քաղաքականության փոփոխությունը մեղմացմանն ուղղված լայնածավալ քայլ չէ:

«Կրճատումը լայնորեն չի խթանում տնտեսությանը, և առողջ քաղաքականության դիրքորոշումը չի փոխվել», - ասվում է առանձին հայտարարության մեջ: ՉԺԲ-ի ներկայացմամբ՝ պահեստավորման նորմի իջեցումը փոխհատուցում է սեպտեմբերի կեսերի հարկման ժամանակահատվածը, և բանկային համակարգում ընդհանուր իրացվելիությունը հիմնականում կայուն կմնա:

«Կրճատումները դրամական քաղաքականության զգալի թեթևացում չեն նշանակում», - ասում է «Standard Chartered Bank Ltd.»-ի՝ Յոնկոնգում Չինաստանի և Յուսիսային Ասիայի գծով գլխավոր տնտեսագետ Դին Շունգը: *«Փոխարենը դա այն է, ինչ նրանք պետք է անեն՝ մի տեսակ սահմանային թեթևացում, որպեսզի կանխվի դրամավարկային քաղաքականության խստացումը»*:

Ուոլ Սթրիթը հորդորում է թրեյդերներին վերադառնալ գրասենյակ

Ապրիլ 7, 2020 | Հակոբ Հակոբյան
Bloomberg | Greed and Fear Collide: Wall Street Calls Traders Back to Office

Ապրիլի 2-ին՝ մահացու պանդեմիայի ընթացքում, երբ աշխարհում կորոնավիրուսի վարակակիրների թիվը հասել էր 1 միլիոնի, «JPMorgan Chase & Co.» ղեկավարներն էլեկտրոնային փոստով ուղարկեցին Նյու Յորքի առևտրային հարթակների անձնակազմին վերաբերող իրենց վերջին պլանները:

Վաճառքի բաժնի աշխատակիցներից մեկը նկատեց, որ գործընկերներից մեկի անունն այդ ցուցակում չկա և հարցրեց, թե որտեղ է: «Կորոնա Թաուն, ԱՄՆ», - պատասխանեց տղամարդը: Այնուհետև բանկի վարկային առևտրի գործադիր տնօրեններից մեկը՝ Նիկոլաս Ադրագնաս, հավելեց. «Վաճառքի հարթակը կլինի գրասենյակում, եթե, իհարկե, որևէ մեկը չունենա առողջական խնդիր՝ հաստատված բժշկի ստորագրությամբ»:

Ավելի քան 100 աշխատակցի անուն ներառված էր Բլումբերգի կողմից նկատված հաղորդագրությունների շղթայում, ու ոմանք դրանից սարսափահար էին: Դա տեղի ունեցավ Մադիսոնի պողոտայում՝ «JP Morgan» կենտրոնական գրասենյակում, Covid-19-ի բռնկումից կարճ ժամանակ անց, որի ընթացքում միևնույն առևտրային հարկում գտնված առնվազն 16 մարդ թեստի դրական արդյունք էին ունեցել: Որոշ աշխատակիցներ դժգոհում էին, որ միջին և վերին օդակների ղեկավարներից հակասական հաղորդագրություններ են ստանում գրասենյակներ գալու մասին, որտեղ միլիարդավոր դոլարների շահույթի հարցեր են առաջ քաշվում, մինչդեռ աշխատակիցները նախընտրում են հետևել պետական պաշտոնյաների խորհուրդներին և մնալ տանը:

«Մենք բազմիցս նշել ենք, որ յուրաքանչյուր ոք, ով նախընտրում է գրասենյակ չգալ, պարտավոր չէ անել դա», - ասում է «JP Morgan» խոսնակ Բրայան Մարկինին: «Մենք մեր քաղաքականության մեջ երբևէ չենք

ունեցել բժշկի գրություն ներկայացնելու պահանջ կամ խնդրանք»:

Այս լարվածությունը չի սահմանափակվում միայն «JP Morgan»-ով: Մինչ «Wall Street»-ի ընկերությունների աշխատակիցների մեծամասնությանը առաջարկում էին աշխատել հեռավար, տանը գտնվող մի շարք թրեյդերներ և բանկիրներ (տրանզից մի քանիսը վերջերս էին վարակվել) ասում էին, որ իրենք զանգեր և հաղորդագրություններ են ստանում մենեջերներից, որոնք շտապեցնում են աշխատանքի վերադառնալ:

Փոքր և խոշոր ձեռնարկությունները փորձում են տեղում բավարար թվով անձնակազմ ապահովել արագ առևտուր իրականացնելու համար: Սա խնդրի լուծման ֆինանսական հատվածի տարբերակն է, որը տարածում է գտել Միացյալ Նահանգներում, և որտեղ «հիմնական» աշխատողները պետք է ընտրություն կատարեն աշխատանքը պահելու և իրենց կյանքը վտանգելու միջև:

Առևտրային ջրհեղեղ

Ներդրումային որոշ բանկեր հրապարակավ հայտարարել են, թե որքանով են ի վիճակի աշխատողներին թույլ տալ հեռավար աշխատելու, իսկ «Goldman Sachs Group Inc.»-ը վերջերս հայտարարեց, որ յուրաքանչյուր 50 աշխատողից միայն մեկն է տեղում: Զանի դեռ շուկան տատանվում է, վաճառքի բաժինների մեծ մասը գերարագ գրասենյակային տերմինալներում (high-speed office terminals) լրացուցիչ աշխատողներ է պահանջում, որպեսզի դիմակայի հաճախորդների պատվերների հոսքին: «Bank of America Corp.»-ը պնդում է, որ իր աշխատասենյակում վաճառքի 20 աշխատակցից միայն մեկն է տեղում, «JP Morgan»-ում՝ հինգ աշխատակցից մեկը:

Այն ժամանակ, երբ «JP Morgan» պարտատոմսերի առևտրի ղեկավարները նամակագրության միջոցով միմյանց հետ հաղորդակցվում էին, բանկի համաշխարհային ֆոնդային առևտրի ղեկավար Ջեյսոն Սիփելն իր ենթակայների հետ խորհրդակցական զանգ անցկացրեց: Նա ասաց, որ վաճառքի բաժնի գործունեությունը հեռակա աշխատանքի դեպքում այդքան էլ արդյունա-

վետ չէ, սակայն փորձում են հարգել մարդկանց անվտանգությունը:

Այնուամենայնիվ, Ուոլ Սթրիթում տիրող իրավիճակը հակադրվում է գանձապահների և գանգերի կենտրոնի աշխատակիցների վրա ազդող ճնշումներին, որոնցով ստիպում են վերջիններս ներգրավվել հաճախորդների բանկային գործառնություններում՝ անտեսելով նրանց քիչ գումար վաստակելու փաստը: Ֆինանսական հատվածի սահմաններից դուրս իրավիճակն ավելի բարդ է. ընդամենը երկու շաբաթվա ընթացքում գործազրկության նպաստ ստանալու համար մոտ 10 միլիոն մարդ է դիմել, իսկ «Amazon.com Inc.»-ի նման ընկերությունների աշխատակիցները դժգոհում են անվտանգության պայմաններից:

Վաղուց հայտնի է, որ թրեյդերներն աշխատում են՝ անտեսելով հիվանդությունները, բայց վերջին մի քանի շաբաթների ընթացքում այդ վերաբերմունքը փոխվել է, քանի որ լրատվական միջոցները ցույց են տվել Նյու Յորքի հիվանդանոցների մոտ գտնվող սառնարանային բեռնատարների և Կենտրոնական զբոսայգում գտնվող բժշկական վրանների կադրերը, ինչպես նաև առողջապահության պատասխանատուներին, որոնք մարդկանց խնդրում են մնալ տանը:

Նյու Յորքի խոշոր բրոքերային ընկերության վաճառքի մենեջերներից մեկն ասաց, որ ցանկանում է լինել վերջին աշխատողը, որը կմնա գրասենյակում: Սակայն անցյալ ամիս՝ տուն գնալուց առաջ, նա աշխատանքի վայրում վարակվեց վիրուսով՝ արդյունքում ունենալով ուժեղ հազ: Նյու Յորքի սահմաններից դուրս նա աշխատել է առանձին և արթուն է մնացել է մինչև երեկոյան 1-ը: Վերջերս նա թեստավորվեց, սակայն ապրիլի սկզբի դրությամբ դեռևս չի ստացել թեստի արդյունքները:

Անցյալ ամիս BGC գործընկերների, «Կանտոր Ֆիցջե-րալդ»-ի դուստր ձեռնարկության աշխատակիցներն ստացան «կարևոր» մակագրությամբ գրություն, որտեղ նշված էր, որ պետական ոչ մի հրաման աշխատանքի ներկայանալ չի արգելում:

«Մենք մնում ենք բաց», - ասվում է գրառման մեջ: «Գը-

րասենյակներ գնալը և հասարակական տրանսպորտից օգտվելը թույլատրվում են մեր գրասենյակ և մեր տարածք ժամանելու համար»:

BGC որոշ աշխատակիցներ առանձին բողոքել են, որ իրենց վրա ճնշում են գործադրում կենտրոն գալու համար՝ չնայած նրան, որ մյուս գրառումները հնարավորություն էին տալիս տնից աշխատելու: BGC խոսնակը, սակայն, հրաժարվեց մեկնաբանել այս իրավիճակը:

Այնուամենայնիվ, ընկերության հիվանդացած երկու աշխատակիցներն էին, որ բողոքներ չունեին: Նրանցից մեկը ողջունելի համարեց, որ իրենց հիվանդանալուց հետո ղեկավարությունն իր ամբողջ բաժնին տուն ուղարկեց, իսկ մյուսն ասաց, որ ինքը շարունակել է աշխատել մեկուսացման մեջ, մինչև որ իր ախտանշանները չարվեցին, և ղեկավարները բավական ժամանակ տվեցին ապաքինվելու համար:

Հիմնական անձնակազմ

Աշխատավայրում վիրուսի տարածումը կանխարգելելու համար խոշոր բանկերի մեծամասնությունը ներկայացրեց նմանատիպ ռազմավարություններ. նրանք աշխատանքային հիմնական խմբեր են ուղարկում թրեյդինգային հարթակներ և այսպես կոչված աղետների վերականգնման վայրեր, իսկ մնացած աշխատողներին ուղարկում են տուն: Մի քանի օր անց, սակայն, գրասենյակային դիլերներն սկսեցին բողոքել, որ գործընկերները շարունակաբար հավաքվում են իրենց շուրջ: Ոմանք էլ ասում էին, որ շաբաթներ շարունակ սպասել են, որ տեխնիկական աշխատակիցները ֆիզիկապես առանձնացնեն մասնագիտացված տերմինալների շարքերը:

Լոնդոնում «JP Morgan» թրեյդերներից մեկն ասաց, որ սկզբում նրան ուղարկել են ընկերության՝ Թեմզայի երկայնքով ձգվող 19-րդ դարի շինության նկուղ, որտեղ տասնյակ գործընկերներ կյարդայնացած աշխատում էին կողք կողքի: Պայմանները բարելավվեցին, երբ գրասենյակի աշխատակիցներին թույլ տրվեց հեռանալ: Նա հավելեց, որ իրեն ասվել է, թե տնից աշխատելու համար բժշկի գրություն է անհրաժեշտ:

Աշխատակիցներից մեկը նշում է, որ «Natixis SA»-ի Նյու Յորքի գրասենյակում նյարդերը տեղի տվեցին այն բանից հետո, երբ ֆրանսիական բանկը թերյոթերներ ուղարկեց քաղաքից դուրս գտնվող, չափազանց փոքր տարածք ունեցող վերականգնողական կայան, ուր սոցիալական հեռավորությունն անհնար էր պահպանել: Ընկերությունը հետագայում չեղարկեց ծրագիրը և մարդկանց տուն ուղարկեց. աշխատակիցները կարևոր նամակ ստացան ղեկավար կազմից. «Հուլիս գաղտնի. Covid-19-ով վարակված աշխատակիցների ցուցակ»:

Ուղարկված հավելվածը բացած աշխատողները հասկացել են, որ դա համապատասխանության բաժնի կողմից հակաֆիշինգային թեստ է, որը նրանք ձախողել են: Ծատերը բարկացած էին:

««Natixis»-ը կտրականապես մերժում է ցանկացած ենթադրություն այն մասին, որ դա իր աշխատողներին վտանգի է ենթարկում», - ասում է Փարիզում «Natixis»-ի խոսնակ Դանիել Ուիլսոնը՝ հավելելով, որ Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում բոլոր ներդրումային բանկերում աշխատակիցները մարտի կեսերից ի վեր աշխատում են տևից: «Մենք ԱՄՆ-ում, ինչպես ցանկացած այլ վայրում, խիստ միջոցներ ենք ձեռնարկել՝ պաշտպանելով մեր աշխատակիցների առողջությունը և օգնելով դանդաղեցնել վիրուսի տարածումը»:

Բոլորը միացե՛ք

Շուկայական տատանումները կարող են հանգեցնել բանկերի հսկայական շահույթի և կորուստների առաջացման, և գործադիր տնօրենների մեծամասնությունը համաձայն է, որ ճգնաժամը ավելի հեշտ է ղեկավարել առևտրային հարթակներից, որտեղ շփումն ավելի արագ է, իսկ հաղորդակցությունը՝ ավելի դյուրին:

Մարտի 26-ին՝ Նյու Յորքում պետական մեկուսացման չորրորդ օրը, «JP Morgan»-ից Ադրագնան նամակ ուղարկեց իր ենթականերին: Ըստ Ադրագնայի՝ բանկի համաշխարհային շուկաների ղեկավար Տրոյ Ռորբոն «դեռ ցանկանում է բոլորին հետ բերել գրասենյակ»:

Ներդրումային վարկանիշ ունեցող վարկավորման շուկայում նոր ռեկորդ է սահմանվել, քանի որ ամերիկյան

ընկերությունները ձգտում են թողարկել միլիարդավոր դոլարներ արժեցող պարտատոմսեր՝ ֆինանսական միջոցների հավաքագրմանը նպաստելու համար: Այդ օրը Ադրագնայի թիմը վաճառեց ավելի քան 3 միլիարդ դոլար արժողությամբ պարտատոմսեր, ինչն անհնար կլիներ, եթե նրանք աշխատեին տևից:

«Հաշվի առնելով բաժնետոմսերի վաճառքի ծավալը՝ մենք իսկապես կարող ենք աշխատավայրում մեկուսանալ և այնտեղ հիանալի աշխատանք ապահովել մեր աշխատակիցների համար», - գրում է Ադրագնան: «Եկեք գրոհենք և օգտագործենք սա որպես տարբերակման հնարավորություն ինչպես ներսից, այնպես էլ դրսից: ԳՆԱՑԻՆԷ»:

«JP Morgan» խոսնակը չհամաձայնեց այն մտքին, որ Ռորբոն կխրախուսի որևէ մեկին գրասենյակ գալ՝ ասելով, որ շուկայի ղեկավարն իր հերթական կոչերով կրկնում է, թե յուրաքանչյուր ոք, ով հարմար չի գտնում մուտք գործել գրասենյակ, պարտավոր էլ չէ:

Ֆինանսական հատվածի այլ տեղերում միջին մակարդակի ղեկավարները դժկամությամբ են համոզում աշխատողներին, որ իրենց ներկայությունն անհրաժեշտ էր, որպեսզի վերահսկողական ճշումների ներքո ավելի ուշադիր մշտադիտարկվեն թերյոթերների գործարքները: Դեռ պարզ չէ, թե որ վերահսկողներն են նման պահանջ ներկայացրել:

Ըստ պաշտոնյաների՝ արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (SEC) և ֆինանսական արդյունաբերության կարգավորող մարմինը (Finra) վերջին շաբաթների ընթացքում աշխատակիցների թիվը բարձրացնելու համար բանկերի վրա ճշում են գործադրել:

Անցյալ ամիս հրապարակված հայտարարության մեջ «Finra»-ն ասում էր, որ մարդիկ պետք է հեռավար աշխատեն, ինչն ընկերություններին թույլ կտա ստեղծել համակարգեր, որոնք «ողջամիտ» վերահսկողություն կիրականացնեն:

Տևից աշխատելը տարատեսակ ակնարկների հիմք դարձավ բանկիրների և թերյոթերների համար: Նրանցից ոմանք տեխնիկական դժվարությունների

պատճառով ծանր վիճակում էին և մտահոգված՝
ընտանիքում աշխատելու անհարմարությունից:

Մինչդեռ մյուսները սիրում էին ժամանակ անցկացնել
սիրելիների հետ կամ այլ պատճառներ էին գտնում
տնից աշխատելու համար:

«Գոլդման Սաքս»-ի ավագ թրեյդերներից մեկն ասում է՝
այս ընթացքում էլեկտրոնային հաղորդագրություններ
գրել է յոզայի գնդակին նստած կամ տեղում հրում
վարժություններ է կատարել լոգարանում: Ըստ նրա՝
գրասենյակ վերադառնալուց հետո ինքը կկարոտի
համաժողովի ընթացքում ֆիզիկական վարժություններ
կատարելուն:

ԵՄ 2 գերտնտեսությունները պատմական անկում են ապրում

Ապրիլ 8, 2020 | Հակոբ Հակոբյան
Financial Times | Eurozone's two biggest economies sink into historic recessions

Տնտեսական և առևտրի անկումը ամիսների ընթացքում ի չիք է դարձնում Գերմանիայում և Ֆրանսիայում տարիների տնտեսական աճը:

Հունիսի 24-ին հրապարակված կանխատեսումների համաձայն՝ ղեկավար մարմինները նախագուշացնում են, որ կորոնավիրուսով պայմանավորված սպասվելիք ճգնաժամն ընդամենը մի քանի ամսում ի չիք կդարձնի Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսությունների՝ համաշխարհային առևտրում տարիների կատարած աշխատանքը:

Ըստ Գերմանիայի տնտեսական հետազոտությունների առաջատար ինստիտուտների տվյալների՝ առաջիկա երեք ամիսների ընթացքում՝ մինչև հունիս, գերմանական տնտեսությունը անկում կապրի մոտ 10%-ով: 1970 թվականի եռամսյակային ազգային հաշիվները վարելուց ի վեր՝ սա ամենակտրուկ անկումն է, ինչը կրկնակի ավել է 2008 թվականի ֆինանսական ճգնաժամի ամենամեծ անկման ցուցանիշից:

Ֆրանսիայի բանկը չորեքշաբթի օրը տեղեկացրեց, որ համաճարակի տարածումն զսպելու համար յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ տնտեսության լայն հատվածների գործունեության դադարեցումը 1.5%-ով դանդաղեցնում է ՀՆԱ աճի տեմպը: Կենտրոնական բանկը հայտնել է, որ ավելի քան երեք շաբաթվա դադարից հետո Ֆրանսիայի տնտեսության մեջ արտադրությունը Երկրորդ աշխարհամարտից ի վեր ամենաարագ տեմպերով անկումն է գրանցել՝ նշելով, որ համախառն ներքին արդյունքը տարվա առաջին երեք ամիսներին նվազել է 6%-ով:

Չորեքշաբթի օրը ՏՀԶԿ հրապարակած տվյալները ցույց տվեցին կորոնավիրուսի հարուցած ցնցումների մեծությունն ու արագությունը գլոբալ տնտեսության

վրա. դա խոշոր տնտեսությունների սպասվելիք անկումը գրանցող ամենամեծ ազդանշանն էր:

Փարիզյան կազմակերպությունը նշում է, որ իր՝ տնտեսական ցիկլի շրջադարձային պահերը որոշելու համար նախատեսված բաղադրյալ առաջատար ցուցանիշների ինդեքսը խոշոր տնտեսությունների մեծ մասում գրանցել է մարտ ամսվա ամենամեծ անկումը՝ արտացոլելով սահմանափակող միջոցառումների ուղղակի ազդեցությունը արտադրության, սպառման և ապագայի հանդեպ վստահության վրա:

Միևնույն ժամանակ, ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության կանխատեսումների, ֆինանսական ճգնաժամի համեմատ համաշխարհային առևտրի՝ ավելի մեծ տեմպերով նվազում է սպասվում: ԱՀԿ-ն կանխատեսում է նաև համաշխարհային ապրանքատեսակների առևտրի 32%-ով անկում՝ պայմանավորված Covid-19-ի ճգնաժամով, ինչը շատ ավելի արագ անկում է 2009թ. 12%-ի համեմատ:

«Այս թվերը սարսափելի են. դրանցից խուսափել հնարավոր չէ», - ասում է կազմակերպության գլխավոր տնօրեն Ռոբերտո Ազվեդոն: *«Բացի բուն հիվանդությունից առաջացած տառապանքներից՝ առևտրի և արտադրության անխուսափելի անկումը ցավալի հետևանքներ կունենա նաև տնային տնտեսությունների և ձեռնարկությունների համար»:*

Այդուհանդերձ ՏՀԶԿ-ն նախագուշացրեց, որ արգելափակման միջոցառումների տևողության անորոշության պատճառով չորեքշաբթի օրվա ներկայացված տվյալները կարող են արտացոլել միայն ստեղծված ընթացիկ իրավիճակը և ոչ այն, թե որքան երկար կամ որքանով բացասական կլինի տնտեսական գործունեության անկումը: Կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումները սառեցրել են բազմաթիվ բիզնեսների գործունեությունը և մարդկանց մեծամասնությանը ստիպել մնալ տանը, ինչը Եվրոպայի առաջատար տնտեսություններին տանում է դեպի անկում:

Չորեքշաբթի օրը Շվեյցարիայի կառավարությունը նշեց, որ վատթարագույն դեպքում այս տարի կորոնավիրուսային ճգնաժամի արդյունքում իր

տնտեսությունն անկում կապրի 10%-ով, ինչը 1980 թվականից հետո կլինի ամենամեծը: Կառավարությունը հայտարարել է, որ ավելի արագ լինելու և ազգային արգելափակումների՝ մինչև մայիս ավարտվելու դեպքում այս տարի տնտեսությունը կունենա 7,1 %-ի անկում:

Բեռլինի, Փարիզի և Եվրոպական այլ մայրաքաղաքների կառավարությունները միլիարդավոր Եվրոների լայնածավալ ծրագրեր են նախաձեռնել անկումից տուժած գործարարներին և աշխատողներին աջակցելու համար:

«Մենք այժմ հսկայական հարկաքույրջետային խթանող քաղաքականություն ենք իրականացնում Եվրոպայում, քանի որ ՅՆԱ-ն նվազում է, և եկամուտները կայունանում են», - ասում է Փարիզի «Sciences Po»-ի տնտեսագիտության պրոֆեսոր Ֆիլիպ Մարտինը: «Կլժմ այդ եկամուտները պահպանվում են, ուստի Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում խնայողությունների տոկոսադրույթն արագորեն աճում է: Հարցն այն է, թե մենք ինչ պետք է անենք դրա հետ ճգնաժամից հետո: Դա շատ անորոշ է»:

Կենտրոնական բանկից հայտնեցին, որ Ֆրանսիայում մարտ ամսվա ընթացքում ամեն շաբաթ բիզնեսի ակտիվությունը նվազել է մոտ մեկ երրորդով: Ենթադրվում է, որ Ֆրանսիայի տնտեսության անկումը կլինի Նույնը, ինչ 1968-ի երկրորդ եռամսյակում, երբ ուսանողների բողոքական շարժման ազդեցության պատճառով համախառն ներքին արդյունքը նվազեց 5.3%-ով: Երկրի առաջատար տնտեսական հինգ հաստատությունների կատարած հետազոտության արդյունքներով (այն անց է կացվում կառավարության համար, տարեկան 2 անգամ) նախատեսվում է Գերմանիայի տնտեսության անկում՝ առաջին եռամսյակում 1.9, իսկ տարվա ընթացքում՝ 4.2%-ով: Նույն կանխատեսմամբ տնտեսությունը կվերականգնվի հաջորդ տարի՝ ապահովելով 5.8% աճ:

«Մինչ այժմ գերմանական տնտեսության «դրական» մասը եղել է ծառայությունների ոլորտը, բայց ակնհայտ է, որ այս ճգնաժամն ավելի ուժեղ ազդեցություն կունենա ծառայությունների ոլորտի, քան արտադրության

վրա, քանի որ արդյունաբերական արտադրության գործընթացն ավելի երկար է տևում, քան մանրածախ առևտրինը կամ ծառայություններինը, որոնք հիմնականում դադարել են», - նշեց Ֆրանկֆուրտի ING-ի տնտեսագետ Կարսեն Բոզետսկինը:

Ենթադրվում է, որ ճգնաժամը Գերմանիայում գործազուրկների թիվը կավելացնի 236.000-ով՝ հասցնելով մինչև 2.5 միլիոնի, ինչը կբարձրացնի գործազրկությունը ռեկորդային ցածր մակարդակից՝ 5-ից մինչև 5.5%: Դա, իհարկե, Եվրագոտու շատ այլ երկրների գործազրկության մակարդակի ցուցանիշից ցածր կմնա. վերջերս Միությունում գործազրկության ընդհանուր մակարդակը հասել է 12-ամյա նվազագույնի՝ 7.4%-ի:

«Գերմանիան լավ դիրքում է տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար և կարող է միջնաժամկետ հեռանկարում հասնել այն տնտեսական մակարդակին, որին հնարավոր կլիներ հասնել առանց ճգնաժամի», - ասում է Տիմո Վոլմերսը Մյունխենում «Իֆո ինստիտուտ»-ի կանխատեսումների ղեկավարը:

Հինգ հաստատությունները կանխատեսում են, որ Բեռլինի արձագանքը ճգնաժամին երկրին բյուջեի դեֆիցիտի կտանի, ինչն առաջինն է վերջին մի քանի տարվա ընթացքում և հավասար է ՅՆԱ-ի 4.7%-ին: Սա կավելացնի պետական պարտքը ՅՆԱ-ի գրեթե 60-70%-ով:

Եվ Գերմանիան, և՛ Ֆրանսիան կորոնավիրուսային ճգնաժամի մեջ մտան արդեն իսկ թուլացած տնտեսական պայմաններով: Անցյալ տարի Գերմանիան հազիվ խուսափեց անկումներից, քանի որ նրա արտադրության վրա ազդել էր ԱՄՆ-Հինաստան առևտրային պատերազմը, իսկ Ֆրանսիայի տնտեսությունը անկում էր գրանցել անցած տարվա վերջին քառորդում՝ գործադուլերի և բողոքի ցույցերի արդյունքում:

ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ OTHER PUBLICATIONS

Նյութեր՝ հրատարակված «Արևելյան գործընկերության զարգացում» զեկույցում՝
«Ինլայթ» ՀԿ-ի և «StrategEast» կենտրոնի համագործակցության շրջանակում:

Materials published in the "Eastern Partnership Development" Report within the framework of
"Enlight" NGO and "StrategEast" cooperation.

Direct EU Support to Local Small Businesses Could Reduce Pandemic Related Economic Loss in Armenia

Gevorg Gasparyan, Narine Petrosyan, and Hakob Hakobyan | June 3, 2020
StrategEast | "Eastern Partnership Development" Report

According to the announcement of the European Commission, the EU will provide EUR 80 million of immediate and EUR 883 million of medium-term support to the six Eastern Partnership countries in response to the COVID-19 outbreak. As we can see, such an assistance package aims to respond both to the immediate needs of the health systems of EaP countries by supporting the supply of medical devices and personal equipment, as well as medium-term needs to small and medium-sized enterprises and the vulnerable groups of society. Currently, Armenia is bracing itself for a dramatic increase in the number of infections, and the EU's assistance can benefit the development of the next phase of the response in Armenia.

While the economic impact of the pandemic in the EaP region as well as in Armenia is still difficult to forecast, the effective government measures against the virus and gradual assistance also from the side of the EU will be essential to shorten the time to recovery and keep the entire region stable.

Do you consider this kind of support sufficient?

Alongside adequate state programs, the amount allocated for support could have a moderately positive effect. It is, of course, not sufficient to offset the vast present and future economic consequences of the pandemic. Another factor in play is the final distribution of financial aid through the Armenian state apparatus to the private sector. However, it is proportional to EU support to other EaP countries as seen below.

What kind of EU programs would best help your country prevent the dramatic spread of COVID-19 and reduce the impacts of the outbreak – health, educational, tech-

nical, business support programs, etc.?

Direct support to local small businesses would have a higher influence on reducing pandemic-related economic loss. Those programs would have a multiplicative effect on the population needs and other mentioned areas of impact. The EU has experience of working with the Armenian private sector and NGOs in the past. The initiation of such cooperation during the pandemic would bring interesting results and would further expand the network of overlapping ties between the EU, the Armenian government, and the Armenian private sector. As for the prevention of the spread of the pandemic, it is more likely that factors like Armenia's government actions in recent months are more at play. In the past, the EU has constantly sought the improvement of the institutional efficacy of Armenian government institutions. The work in this direction must continue in the future with new intensity as some institutional reforms initiated by the EU in the past have proved useful during a pandemic, such as the e-governance infrastructure of the Armenian government, which almost entirely is a result of EU guidance and financial support. Direct EU Support to Local Small Businesses Could Reduce Pandemic Related Economic Loss in Armenia. Another crucial action would be the exchange of the vaccine in case European companies develop it in the future or support in acquiring it from other parties.

How did the pandemic influence the relations between your country and the EU?

Before the implementation of the Eastern Partnership Support Package, the scale of EU support in the region was relatively small and less noticeable. Instead, China and Russia were struggling to gain the lead in overcoming the pandemic. Proof of this was the humanitarian assistance provided by China to Armenia in early April in the form of medical equipment and other necessary facilities. Although it took some time for Brussels to develop its main support package due to the crisis in the EU, the EU seems to be becoming a leading donor in the Eastern Partnership, particularly in Armenia, helping to fight the epidemic, especially its economic woes. With this program, Armenia has received about EUR 92 million in support from the EU (the third-larg-

est after Ukraine and Georgia). The statement on the package will also be a stimulus for the Eastern Partnership summit to be held in June 2020, which will help strengthen the EU's position as a key international player in the region and ensure public support. It is, however, hard to find any specifically Armenia-related factors for the aid package size that are the product of the recent years or the pandemic itself. EU financial aid to the Eastern Partnership countries and specifically to South Caucasian countries has generally followed the same pattern over the years. If we take the South Caucasus, it turns out that Georgia has been the largest recipient of EU aid in the region since 2007, followed by Armenia. Azerbaijan is in the last place [i].

In the EaP region, Ukraine has been the number one recipient for all fiscal years since 2007. The Support Package largely follows the same pattern with Ukraine receiving EUR 190 million (the highest), Georgia EUR 183 million (second highest), then Armenia EUR 93 million (third), Moldova EUR 87 million, Belarus EUR 60 million, and Azerbaijan only EUR 14 million. Azerbaijan and Belarus have traditionally received the lowest amount of EU aid, while Ukraine and Georgia the highest. Armenia and Moldova have been receiving relatively proportional amounts. Thus, the dynamics of Armenia-EU interactions during the pandemic generally proceed within the same frameworks developed between Armenia and EU over the years and don't mark any significant changes in their relations. However, as mentioned above, the aid package might have a positive impact on the EU's perceived role as a progressive power center and a key player in the region in light of rising instability in the world.

References

[i] Recipients data from 2007 to 2021 https://euaidexplorer.ec.europa.eu/content/explore/recipients_en

ԵՄ ուղղակի աջակցությունը տեղական փոքր բիզնեսին կարող է նվազեցնել համավարակով պայմանավորված տնտեսական կորուստները Հայաստանում

Գևորգ Գասպարյան, Նարինե Պետրոսյան և Հակոբ Հակոբյան | Հունիս 3, 2020
Թարգմանիչ | Մարիետա Ստեփանյան

Եվրոպական հանձնաժողովի հայտարարության համաձայն՝ ԵՄ-ն 80 միլիոն եվրոյի անհապաղ և 883 միլիոն եվրո միջևաժամկետ աջակցություն կտրամադրի Արեվելյան գործընկերության վեց երկրներին՝ կորոնավիրուսային համավարակի բռնկմանն ի պատասխան: Ինչպես տեսնում ենք, այսպիսի օգնության փաթեթը նպատակ ունի արձագանքելու ինչպես ԱԳ երկրների առողջապահական համակարգերի անմիջական կարիքներին՝ աջակցելով բժշկական սարքավորումների և անձնակազմի հանդերձանքի մատակարարմանը, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկությունների և հասարակության խոցելի խմբերի միջևաժամկետ կարիքներին: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է վարակվածության թվի կտրուկ աճի, և ԵՄ օգնությունը կարող է օգտակար լինել Հայաստանում՝ արձագանքման հաջորդ փուլի նախապատրաստման ընդառաջ:

Թեև համավարակի տնտեսական ազդեցությունն ԱԳ տարածաշրջանում և ՀՀ-ում դեռ դժվար է կանխատեսել, վիրուսի դեմ կառավարության արդյունավետ միջոցները և ԵՄ կողմից աստիճանական օգնությունը ևս առանցքային կլինեն՝ վերականգնմանն ուղղված ժամանակը կրճատելու և ամբողջ տարածաշրջանը կայուն պահելու համար:

Բավարար համարում եք արդյոք այս տեսակ աջակցությունը

Համապատասխան պետական ծրագրերին զուգահեռ աջակցության համար հատկացված գումարը կարող է չափավոր դրական ազդեցություն ունենալ: Իհարկե, այն բավարար չէ համավարակի տնտեսական ներկա և գալիք ահռելի հետևանքները փոխհատուցելու համար: Մեկ

այլ գործոն է ՀՀ պետական ապարատից ֆինանսական օգնության վերջնական բաշխումը դեպի մասնավոր հատված: Այնուամենայնիվ, ԵՄ-ի աջակցությունը ԱԳ Երկրներին կատարվում է համամասնորեն, ինչպես երևում է ստորև:

ԵՄ ինչպիսի՞ ծրագրեր լավագույնս կօգնեն Ձեր երկրին՝ կանխելու COVID-19-ի կտրուկ տարածումը և նվազեցնելու բռնկման հետևանքները՝ առողջապահակա՞ն, կրթակա՞ն, տեխնիկակա՞ն, բիզնեսի աջակցությա՞ն, թե՞ այլ:

Համավարակով պայմանավորված տնտեսական կորուստները նվազեցնելու հարցում փոքր ձեռնարկություններին ուղղակի աջակցությունն ավելի մեծ ազդեցություն կունենար: Այդ ծրագրերը բազմապատկական ազդեցություն կունենային բնակչության կարիքների և նշված մյուս ոլորտների վրա: ԵՄ-ն անցյալում Հայաստանի մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների հետ աշխատելու փորձ ունեցել է: Համավարակի ընթացքում նման համագործակցության նախաձեռնումը հետաքրքիր արդյունքների կբերի և էլ ավելի կընդլայնի ԵՄ-ի, ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի միջև փոխգործակցությունը:

Ինչ վերաբերում է համավարակի տարածումը կանխելուն, ամենայն հավանականությամբ առավել մեծ դեր կխաղան այնպիսի գործոններ, ինչպիսիք են վերջին ամիսների ընթացքում ՀՀ կառավարության գործադրած քայլերը: Նախկինում ԵՄ-ն անընդհատ ձգտում էր բարելավել Հայաստանի պետական հաստատությունների ինստիտուցիոնալ արդյունավետությունը:

Այս ուղղությամբ աշխատանքները պետք է ապագայում շարունակվեն նոր ինտենսիվությամբ, քանի որ նախկինում ԵՄ կողմից նախաձեռնված որոշ ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսին է ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքը, որը գրեթե ամբողջությամբ արդյունք է ԵՄ ուղղորդման և ֆինանսական աջակցության, ապացուցել են իրենց օգտակարությունը համավարակի ընթացքում: ԵՄ ուղղակի աջակցությունը տեղական փոքր բիզնեսին

կարող է նվազեցնել համավարակով պայմանավորված տնտեսական կորուստները Հայաստանում:

Եվս մեկ կարևոր քայլ կլինի պատվաստանյութի փոխանակումը՝ ապագայում եվրոպական ընկերությունների կողմից դրա մշակման դեպքում կամ աջակցությունը այլ կողմերից այն ձեռք բերելու հարցում:

Ինչպե՞ս ազդեց համավարակը Ձեր երկրի և ԵՄ միջև հարաբերությունների վրա

Մինչև Արևելյան գործընկերության աջակցության փաթեթի ընդունումը, տարածաշրջանում ԵՄ աջակցության չափերը համեմատաբար փոքր էին և պակաս նկատելի: Փոխարենը Չինաստանը և Ռուսաստանը պայթարում էին համավարակի հաղթահարման հարցում առաջատար դիրք զբաղեցնելու համար: Դրա վկայությունը Չինաստանի կողմից ապրիլի սկզբին Հայաստանին տրամադրած մարդասիրական օգնությունն էր՝ բժշկական սարքավորումների և անհրաժեշտ այլ պարագաների տեսքով: Չնայած ԵՄ-ում ճգնաժամի պատճառով Բրյուսելից որոշ ժամանակ պահանջվեց իր աջակցության հիմնական փաթեթը մշակելու համար, սակայն ԵՄ-ն կարծես թե դառնում է առաջատար դոնորն Արևելյան գործընկերության երկրներում, մասնավորապես Հայաստանում՝ օգնելով պայթարել համաճարակի, հատկապես դրա տնտեսական հետևանքների դեմ: Այս ծրագրով Հայաստանը ԵՄ-ից ստացել է շուրջ 92 միլիոն եվրոյի աջակցություն (մեծությամբ երրորդը Ուկրաինայից և Վրաստանից հետո): Փաթեթի վերաբերյալ հայտարարությունը խթան կհանդիսանա նաև 2020 թվականի հունիսին Արևելյան գործընկերության գազաթնաժողովի գումարման համար, որը կօգնի ամրապնդել ԵՄ դիրքը՝ որպես տարածաշրջանում գլխավոր միջազգային դերակատար, և կապահովի հանրային աջակցություն:

Այնուամենայնիվ, դժվար է գտնել օգնության փաթեթի չափը պայմանավորող հիմնականում հայաստանյան գործոններ, որոնք վերջին տարիների կամ հենց բուն համավարակի արդյունք են: ԵՄ ֆինանսական օգնությունը Արևելյան գործընկերության և, մասնավորապես, Հարավային Կովկասի երկրներին, ընդհանուր առմամբ, նույնօրինակ է եղել անցնող տարիների

ընթացքում: Եթե դիտարկենք Հարավային Կովկասը, ապա 2007 թվականից ի վեր տարածաշրջանում ԵՄ ամենամեծ օգնությունը ստացել է Վրաստանը, հաջորդիվ՝ Հայաստանը: Ադրբեջանը վերջին տեղում է [i]:

Նույն ժամանակահատվածում ԱԳ տարածաշրջանում Ուկրաինան առաջնային շահառուն է եղել բոլոր ֆինկալ տարիների համար: Նույն տրամաբանությամբ է բաշխվել նաև Աջակցության փաթեթը. Ուկրաինան ստացել է 190 միլիոն եվրո (ամենաշատը), Վրաստանը՝ 183 միլիոն (մեծությամբ երկրորդը), Հայաստանը՝ 93 միլիոն (երրորդ ցուցանիշը), Մոլդովան՝ 87 միլիոն, Բելառուսը՝ 60 միլիոն, և Ադրբեջանը՝ ընդամենը 14 միլիոն եվրո: Ադրբեջանն ու Բելառուսն ավանդաբար ստանում են ԵՄ օգնության ամենափոքր չափաբաժինը, մինչդեռ Ուկրաինան և Վրաստանը՝ ամենաբարձրը: Հայաստանն ու Մոլդովան ստանում են համեմատաբար համամասնական գումարներ: Այսպիսով, Հայաստան-ԵՄ փոխհարաբերությունների դինամիկան համավարակի ընթացքում, ընդհանուր առմամբ, ընթանում է Հայաստանի և ԵՄ միջև տարիների ընթացքում ձևավորված նույն շրջանակներում, և վերջիններիս հարաբերություններում էական փոփոխություններ նկատելի չեն:

Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերևում, աշխարհում աճող անկայունության լույսի ներքո օգնության փաթեթը կարող է դրական լույս սփռել իբրև առաջատար ուժային կենտրոնի և տարածաշրջանում առանցքային դերակատարի ԵՄ-ից ակնկալվող դերի վրա:

Հղումներ

[i] ԵՄ-ից օգնություն ստացած երկրների տվյալները 2007-2021 թթ. https://euaidexplorer.ec.europa.eu/content/explore/recipients_en

Armenia Needs to Introduce a Market-Oriented Policy for IT

Hakob Hakobyan and Heghine Aleksanyan | July 29, 2020

StrategEast | "Eastern Partnership Development" Report

Given the positive record of training in STEM subjects in post-Soviet countries and the latest success stories of ICT development in the region, do you think your country can compete with the EU states in terms of ICT sector development?

Undoubtedly, a "Soviet school" played a significant role in laying down the foundation for the contemporary ICT sector. However, that potential should be enhanced by adding market-oriented components, such as commercialization of a given project, adequate project management, etc. By introducing that policy, the ICT sector will become self-sufficient in terms of financial resources and less dependent on external resources. As for competition with the EU countries, this goal is feasible only in the case of finding a unique niche and promoting it or competing with less costly talent-related expenses.

What success stories can you name in e-government services?

During recent years, the Armenian government has implemented several activities aimed at improving e-service delivery. The main focus has been made especially on two components: Governmental Interoperability and Single Electronic Window. And although most of the current e-governance tools still need improvements, there are also some significant results. Successful projects include websites such as e-gov.am with its budget-presenting interactive tool and other government services provided through the internet; the unified website for publications of draft legal acts (www.e-draft.am), which enables more transparent and open discussion over drafts of legal acts; and the Harkatu.am website for monitoring the thousand highest taxpayers. In addition to that, the State Revenue Committee enhanced

its computational capabilities by introducing and integrating a data analyzing system for research in the relevant field.

Can you say that your country possesses strong human capital, skilled in IT?

The success story of ArMath and TUMO – Center for Creative Technologies may hint toward big potential in Armenia for the ICT sector in terms of human capital. Specialized professional skills development programs are also offered by different organizations such as Microsoft Innovation Center Armenia, Synopsys Inc, and others. The competition and quality of University programs with IT specializations have also risen but it is not always sufficient to meet the industry demands. The key is to release such projects from possible bureaucratic chaos and inefficiency, at the same time keeping a high level of integrity of the sector.

Հայաստանը SS ոլորտի համար շուկային միտված քաղաքականության ներդրման կարիք ունի

Հակոբ Հակոբյան և Հեղինե Ալեքսանյան | Յուլիս 29, 2020

Թարգմանիչ | Մարիամ Սահակյան

Հաշվի առնելով հետխորհրդային երկրներում STEM առարկաների դասընթացների դրական արդյունքները և տարածաշրջանում ՏՀՏ զարգացման վերջին հաջողության պատմությունները՝ ըստ Ձեզ՝ կարո՞ղ է Ձեր երկիրը ոտք մեկնել ԵՄ երկրների հետ ՏՀՏ ոլորտի զարգացման առումով:

Անկասկած, «խորհրդային դպրոցը» զգալի դեր խաղաց ժամանակակից ՏՀՏ ոլորտի հիմքը դնելու գործում: Այնուամենայնիվ, այդ ներուժը պետք է բարելավվի շուկային միտված այնպիսի քաղաքականության համալրմամբ, ինչպիսիք են տվյալ ծրագրի առևտրայնացումը, ծրագրի պատշաճ կառավարումը և այլն: Այդ քաղաքականության ներդրմամբ ՏՀՏ ոլորտը ինքնաբավ կդառնա ֆինանսական ռեսուրսների տեսանկյունից և նվազ կախված արտաքին ռեսուրսներից: Ինչ վերաբերում է ԵՄ երկրների հետ մրցակցությանը, ապա այդ նպատակն իրագործելի է միայն ուրույն տեղը գտնելու և դրանում առաջընթացը խթանելու կամ տաղանդի հետ կապված նվազ ծախսատար մրցակցության դեպքում:

Ի՞նչ հաջողության պատմություններ կարող եք նշել էլեկտրոնային կառավարման ծառայությունների ոլորտում:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարությունն իրականացրել է էլեկտրոնային ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Հիմնական շեշտը դրվել է հատկապես երկու բաղադրիչի վրա՝ Կառավարության փոխգործունակության և մեկ էլեկտրոնային պատուհանի: Եվ չնայած՝ ներկայիս էլեկտրոնային կառավարման գործիքների մեծ մասը դեռ բարելավման կարիք ունի, կան նաև որոշ նշանակալից արդյունքներ: Հաջողված նախագծերը ներառում են այնպիսի կայքեր, ինչպիսիք

են՝ e-gov.am-ը՝ իր բյուջեն ներկայացնող ինտերակտիվ գործիքով և առցանց մատուցվող այլ պետական ծառայություններով, իրավական ակտերի նախագծերի իրապարակման միասնական կայքը (www.e-draft.am), որը հնարավոր է դարձնում վերջիններիս ավելի թափանցիկ և հեշտ քննարկումը, Harkatu.am կայքը՝ հազարավոր խոշոր հարկատուների մշտադիտարկման համար: Դրանից բացի՝ Պետական եկամուտների կոմիտեն ընդլայնել է իր հաշվարկային կարողությունները՝ ներդնելով և ինտեգրելով համապատասխան ոլորտի հետազոտության համար տվյալների վերլուծության համակարգ:

Կարո՞ղ եք ասել, որ Ձեր երկիրն ունի ՏՏ ոլորտում հմտացած մարդկային ուժեղ կապիտալ:

«Արմաթ»-ի և Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հաջողության պատմությունները կարող են Հայաստանում մարդկային կապիտալի տեսանկյունից ՏՀՏ ոլորտի մեծ ներուժի ցուցիչ լինել: Մասնագիտական հմտությունների զարգացման հատուկ ծրագրեր են առաջարկում նաև տարբեր կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Microsoft Innovation Center Armenia», «Synopsis Inc» և այլն:

Բարձրացել են նաև ՏՏ մասնագիտացում ունեցող համալսարանական ծրագրերի մրցակցությունն ու որակը, բայց դա միշտ չէ, որ բավարար է արդյունաբերության պահանջները բավարարելու համար: Հիմնական բանաձևը նման նախագծերը հնարավոր բյուրոկրատական բառսից և անարդյունավետությունից ազատելն է՝ միևնույն ժամանակ պահպանելով ոլորտի ամբողջականության բարձր մակարդակը:

Digital Skills Programs are Crucial for the Development of the Real and Financial Sector in Armenia

Hakob Hakobyan and Heghine Aleksanyan | October 23, 2020
StrategEast | "Eastern Partnership Development" Report

Recently, the EU has been active in establishing a number of initiatives concerning the enhancement of IT sector in Eastern Partnership countries.

Thus, recently, EU4Digital launched a new activity to support women mentorship programs in the tech sector in the EaP countries.

Do you consider such programs to be timely in the post-pandemic period?

In this regard, pre-, during, or post-pandemic periods are the same, in a sense that, even without this external shock, the sooner digital transformation takes place, the better. Given the complementary nature of the digital sector, the programs aimed at the enhancement of digital skills in society are crucial for the development of the real and financial sector, as well as for government and NGOs.

And especially taking into account that the IT sector has great potential for economic growth even during the pandemic and the post-pandemic recovery period, while in many other fields, people started to perceive their jobs to be insecure because of the possibility of redundancies or store closure, and as a result of perceptions of the difficulty of finding alternative employment.

From this perspective, the launch of a women mentorship program in the tech sector in Armenia and the EaP countries can work more effectively as the current difficulties can be an additional incentive for people to take "risk" and find a better position in the labor market, with a higher wage and a professional position.

On the other hand, of course, there is a risk that the necessity of finding alternative employment will change people's attitudes toward the instrumental perception of the job when people lose their interest in the job/profession perceiving it only as a means of satisfaction of their financial needs. This can result in a weak work ethic and will lower their commitment to new programs that may open new opportunities for them. As for the targeted approach regarding women, it is important also to consider the country's social and economic aspects, national variations in employment patterns, and lifestyle choices, as such choices are not made in a vacuum. Of course, today, choices are open to women in the sense that a majority of women in Armenia have choices in terms of education and employment but such factors as preferences toward work family balance and many other country-level and Individual Level variables affect their options, and such factors can also condition women's involvement level in the tech sector or programs directed to this path. On the other hand, mentorship programs for women can succeed as from all the mentioned variables, education's effect is a significant one, especially for those who are at the beginning of their career.

Have you noticed the rising need for digital technologies to support the response to the pandemic consequences in your country?

The need for digital technologies and skills necessary for their use is, without any doubt, needed during the pandemic and, as a consequence, during the lockdown. It may be argued that enhancement is needed with respect to skills, especially among adults, who otherwise are not using digital technologies as intensively in their profession, as the younger generation.

Although, as a whole, Armenia's increasingly significant IT agenda creates a good environment for the development of the potential of the digital economy and society.

Թվային հմտությունները բարելավող ծրագրերը վճռորոշ են Հայաստանում իրական ու ֆինանսական հատվածների զարգացման գործում

Հակոբ Հակոբյան և Հեղինե Ալեքսանյան | Հոկտեմբեր 23, 2020
Թարգմանիչ | Մարիամ Անտիկյան

Վերջին շրջանում ԵՄ-ն ակտիվ գործունեություն է ծավալում ԱլԳ երկրներում SS հատվածի զարգացմանը վերաբերող մի շարք նախաձեռնությունների ստեղծման հարցում:

Այսպիսով, վերջերս EU4Digital-ը սկսել է նոր գործունեություն ծավալել՝ ԱլԳ երկրների տեղեկատվական հատվածում կանանց մենթորության ծրագրերին աջակցելու համար:

Ձեր կարծիքով նմանօրինակ նախագծերը պատեհա՞ծա՞մ են հետհամավարակային ժամանակաշրջանի համար:

Այս առումով, համավարակի բուն ընթացքը, դրան նախորդող և հետհամավարակային շրջանները նույնն են այն իմաստով, որ նույնիսկ առանց այս արտաքին ցնցման՝ ինչքան շուտ թվային փոխակերպումը տեղի ունենա, այնքան լավ: Նկատի ունենալով թվային հատվածի վերադիր բնույթը՝ հասարակության մեջ թվային հմտությունները զարգացնելուն ուղղված ծրագրերը վճռորոշ դեր ունեն իրական և ֆինանսական հատվածների զարգացման, ինչպես նաև Կառավարության և ՀԿ-ների համար՝ հատկապես հաշվի առնելով նաև, որ SS հատվածը տնտեսական աճի համար մեծ ներուժ ունի նույնիսկ համավարակի և հետհամավարակային վերականգնողական շրջանի ընթացքում, մինչդեռ այլ ոլորտներում մարդիկ՝ կրճատումների կամ խանութների փակման հնարավորության պատճառով և այլընտրանքային աշխատանք գտնելու դժվարության ընկալման արդյունքում, սկսել են գիտակցել իրենց աշխատանքների երերունությունը:

Այս տեսանկյունից, կանանց մենթորության ծրագրի թողարկումը Հայաստանի և ԱլԳ երկրների

տեխնոլոգիական հատվածում կարող է ավելի արդյունավետ աշխատել, քանի որ ներկայիս դժվարությունները կարող են մարդկանց համար հավելյալ խթան դառնալ՝ «ռիսկի» դիմելու և աշխատաշուկայում ավելի լավ տեղ գտնելու համար՝ ավելի բարձր վարձատրությամբ ու մասնագիտական դիրքով:

Մյուս կողմից, իհարկե, կա ռիսկ, որ այլընտրանքային աշխատանք գտնելու անհրաժեշտությունը կփոխի մարդկանց վերաբերմունքը դեպի աշխատանքի գործիքային ընկալում, երբ մարդիկ կորցնում են իրենց հետաքրքրությունը աշխատանքի/մասնագիտության հանդեպ՝ դիտարկելով այն միայն որպես իրենց ֆինանսական կարիքների բավարարման միջոց:

Սա կարող է հանգեցնել աշխատանքային էթիկայի թուլացման և նվազեցնել նրանց հակվածությունը մասնակցելու իրենց համար նոր հնարավորություններ ստեղծող նոր ծրագրերի: Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ թիրախային մոտեցմանը, ապա կարևոր է նաև հաշվի առնել երկրի սոցիալ-տնտեսական գործոնները, զբաղվածության օրինա-չափությունների և կենսակերպի ընտրության ազգային առանձնահատկությունները, քանի որ այդպիսի ընտրություններն այլ հանգամանքներից անկախ չեն արվում:

Անշուշտ, այսօր կանայք ազատ են ընտրություն կատարելու մեջ այն իմաստով, որ Հայաստանում կանանց մեծամասնությունը ընտրության հնարավորություն ունի կրթության և զբաղվածության առումով, սակայն աշխատանք-ընտանիք հավասարակշռության մեջ ամկա նախապատվությունները և պետական ու անհատական մակարդակի մի շարք այլ փոփոխականներ ազդում են նրանց ընտրության վրա, և այսօրինակ գործոնները ևս կարող են պայմանավորել կանանց ներգրավվածության մակարդակը տեխնոլոգիական ոլորտում կամ ոլորտին ուղղված ծրագրերում:

Մյուս կողմից էլ, կանանց մենթորության ծրագրերը կարող են հասնել հաջողության, քանի որ նշված բոլոր փոփոխականների մեջ կրթության ազդեցությունը զգալի է, հատկապես նրանց համար, ովքեր նոր են սկսում իրենց կարիերան:

Նկատել՝ արդոք թվային տեխնոլոգիաների զարգացման անհրաժեշտություն՝ Ձեր երկրում համավարակի հետևանքներին արձագանքմանն աջակցելու համար:

Թվային տեխնոլոգիաների ու դրանց օգտագործման համար անհրաժեշտ հմտությունների կարիքը, անկասկած, զգալի է համավարակի և, որպես հետևանք, ներփակման ընթացքում: Կարելի է պնդել, որ հմտությունների բարելավումն անհրաժեշտ է հատկապես մեծահասակների շրջանում, որոնք հակառակ դեպքում նույնքան եռանդագին չեն իրենց մասնագիտության մեջ թվային տեխնոլոգիաների օգտագործման առումով, որքան երիտասարդ սերունդը:

Այնուամենայնիվ ընդհանրացնենք՝ Հայաստանի՝ շարունակաբար ավելի նշանակալի դարձող SS օրակարգը լավ միջավայր է ստեղծում թվային տնտեսության ու հասարակության ներուժի զարգացման համար:

*Հակոբը զոհվել է Կուբաթլուի շրջանում 2020 թ. հոկտեմբերի 26-ին:
Յուզարկավորվել է հայրենի Սայաթ-Նովա գյուղում՝ Արարատի մարզում:*

*Համաձայն ՀՀ նախագահի 2020թ.-ի նոյեմբերի 11-ի «Մարտական
ծառայության մեղալով պարգևատրելու մասին» ՆՅ-296-Ա հրամանագրի՝
հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության և
անմնացորդ նվիրումի համար հետմահու պարգևատրվել է «Մարտական
ծառայության» մեդալով:*

*Հակոբը բոլորիս անասելի կարոտ է թողել՝ պարկեշտության, նվիրվածության,
վճռականության և հայրենասիրության մարմնացում և օրինակ լինելով մեզ
համար: Իր հերոսությամբ սթափեցրել ու պարտավորեցրել է բոլորիս:*

Ջերմ հիշողություններն ու լույս հիշատակը մեր հոգում և սրտում են ~

Hakob fell on the battlefield in the Kubatlu region on October 26, 2020. He was laid to rest in his native village Sayat-Nova, Ararat region.

According to the NH-296-A Decree of the President of the RA of November 11, 2020 "On Awarding the Medal for Combat Service", Hakob was posthumously awarded the Medal "For Combat Service" for his courage and unwavering devotion while defending the borders of the homeland.

Hakob left us all in an indescribable longing. Being an embodiment of decency, devotion, determination and patriotism, he was and will always remain an example for us. His heroism evoked vigilance and commitment in us.

His memory is a bright light that will live forever in our heart and soul ~

Խմբագրությունը՝ Աննա Խաչյանի
General Editing by Anna Khachian

Գրաֆիկական ձևավորումը՝ Աստղիկ Աբրահամյանի
Graphic Design by Astghik Abrahamyan

Անգլերեն թարգմանության խմբագրությունը՝
Մարինե Օհանջանյանի, Հեղինե Ալեքսանյանի
Translation edited by Marine Ohanjanyan, Heggine Aleksanyan

Սրբագրությունը՝ Նունե Մաթևոսյանի, Մարիամ Մանուկյանի
Proofread by Nune Matevosyan, Mariam Manukyan

© «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ, 2021
© "Enlight" Public Research Center NGO, 2021

enlightngo.org